Ugo Pudlinmayer

2004

229
5.

1439 №-11-2

ՍԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

կամ

ՋՐՕՍԱԲԱՆ ՀՈԳԵԻՈՐ։

—

Ամփոփեալ յԱմբողջականութիւն ի Սուրբ Գրոց Հայրապետաց ուղեղաց հայոց։

Ի ՄՈՍԿՈՎ։

1840.

14139 ԱԱ
160-ՀԿ

ԱՂՕԹՄԱՏՈՅՑ:

Գանձարան՝ ուխտականութեան աղօթմատոյց և զբօսարան Հոգևոր 'ի ժամ անմահ դառիւնն անարիւն զենման, և 'ի յառանձնութեան ջերմեռանդ քրիստոնէից՝ կենսառիթ խոկմունք, և երանական զմայլեցուցիչք:

Արտադրեալ երանելի Հօրն մերոյ Աղէքսանդր կաթուղիկոսի 'ի պէտս լուսաւորչական անձանց:

'Ի Հայրապետութեան Տեառն Յովհաննու Աստուածընտիր կաթուղիկոսի ամենայն Հայոց և Ասպետի:

Յառաջնորդութեան Ռուսսիաբնակ հայոց Տն Ներսիսի Արժանընտիր Արհի եպիսկոպոսի և Ասպետի:

'Ի լոյս ածեալ էջերսոյն, պրպտեալ և ծանրագոյն էջքսդ, 'ի Գէորգ և 'ի Գրիգոր Մաշտոցաց և 'ի Մէլքիսէդ ածր Յուսուբեանեան Սուրբ հաւատոյ և 'ի Մարգարէ ածր Յուսուբեանեան Սուրբ հաւատոյ ի-գրեանց:

'Ի ՄՈՍԿՈՎ:
'Ի Տպարանի Հիմարանի Տեսչ Լուսրեանց:
1840.

МОСКОВСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
МОСКОВСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА

243

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпѣчатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ Москва, 1840 года, Апреля 29 дня.

Цензоръ В. Флеровъ.

Ի Սիմեոնէ Հոգէլոյս Հայրապետէ յօրինեալ յառաջնոյն Աղօթագրոյց։ Ցոգուն ոսկաւ ինչ և զոսպիսուութենէ աղօթից։

Կամիմ ասել ի խօսիլ համառօտ բանիւք զորպիսութենէ և զկարկաւորութենէ աղօթից։ Համառօտ ասեմ, վասն զի՝ նախապէս՝ գիրք տետրակիս այնպէս պահանջէր։ Արկրորդապէս՝ զի բոլոր աստուածաբանք որք անցեալ են՝ և որք գալոց են. եթէ՝ ի մի եկեալ՝ կամիցին խօսիլ վասն աղօթից, ոչ կարեն բուսականապէս ծառել զզորութենէ նորա։ Զի՝ ի բոլոր աստուածաշունչ գիրս, թէ՝ ի հինն, և թէ՝ ի նորս, որքան հրաշք և մեծագործութիւնք լեալք են, ՝ի ձեռն աղօթից տեսանին, որպէս յայտնի իսկ է։ Վասն որոյ՝ մեք ըստ պահանջման փոքրու տետրակիս՝ համառօտաբար ասացուք զդիմանէ մերմէ՝ և վերջացուսցուք։ Արդ՝ ՝ի հեստիլն մարդոյս ՝ի պատուիրանացն Աստուծոյ, և ՝ի զրկիլն յամենաբարելի դրախտէն, և յանկանիլն յաշխարհս այս աշխարելի, պատահեցաւ երից գլխաւոր պակասութեանց. այսինքն՝ նեղութեան աղքատութեան և հիւանդութեան՝ ըստ հոգւոյն և ըստ մարմնոյն։

Իսկ Քրիստոս տէրն մեր՝ որ է ամենակարող փրկիչ, ամենահարուստ թագաւոր, և ամենիմաստ բժիշկ. հնարեաց զդեղ երից պակասութեանցս այսոցիկ։ Քանզի՝ ընդեղեալսն և զդերեալսն ի սատանայէ՝ ազատեաց պատուական արեամբն իւրով. որպէս ցուցանէր երևելապէս առ դիւահարսն։ Զաղքատսն լցոյց բարութեամբ՝ ասելով՝ որ գայ առիս, ոչ քաղցիցի. որպէս և երևելապէս եցոյց առ հինգ հազարսն։ Զհիւանդսն բժշկեաց պէսպէս հրաշիւք. որպէս յայտնապէս ցուցանէր առ ցաւագնեալսն։ Զոստ աւետարանին թէ՝ զորութիւն բառզում ելանէր ի նմանէ և բժշկէր զամենեսեան։ Քանզի՝ զմարմնաւոր հիւանդսն բանիւ բժշկէր. և զհոգևոր հիւանդսն՝ հոգևոր դեղօք. այսինքն՝ պահօք, ողորմութեամբ, խոնարհութեամբ, հալածանօք, խաչիւ՝ և այլ առաքինական գործովք։ Որպէս ասէր, նեղ և անձուկ է ճանապարհն՝ որ բժշկէ զմեղաւորն և տանի ի կեանս։

Ցոյց մինչ զկկծեցուցիչ դեղորայս զայսոսիկ՝ ի գործ ածէր, մարմնասէր և անարի մարդիկք տրտընջէին զնմանէ ասելով թէ՝ այդ դեղորայքդ դառն են. եթէ այդպէս էր՝ ով կարէ սպրիլ։

Վասն որոյ՝ ուսոյց առ հասարակ ամենեցունց զդիւրին դեղ մի, որ յամենայնի պիտանի է, և ամենայն ցաւոց առողջարար այսինքն՝ զաղօթս առնել։ Ասելով թէ՝ զոր ինչ և կամիցիք, խնդրեցէք առնուցուք. և թէ յաղօթս կացէք ջմտանել ի փորձութիւն։ Ահա քեզ դեղ մի հեշտագիւտ, դիւրին, յամենայնի պիտանի, և միշտ առ ձեռն

պատրաստ. որում ոչ ինչ դոյ արդել. և ոչ ունի դժուարութիւն մի։

Քանզի վասն պահոց կարեմ պատմաւել թէ՝ տկար եմ. և այլն։ Վասն ողորմութեան ասել թէ՝ աղքատ եմ, զի՝նչ տայ։ Վասն ճշանց, հալածանաց, չարչարանաց. վասն հաւատոյ. և այլոց պսպղիսեաց խստագունից առաքինական գործոց՝ կարեմ պատճառս դնելթէ՝ դժուարինք են. ոչ կարեմ տանիլ։ Իսկ վասն աղօթից բնաւին չունիս ինչ զպատճառս դնելոյ։ Քանզի՝ յոր հասակի, յոր կացութեան և յորում ժամանակի և յոր տեղւոջ և իցէ ոք, թէ ծեր՝ թէ տղայ, թէ հարուստ, թէ աղքատ, թէ առողջ, թէ հիւանդ. կարէ աղօթել՝ եթէ կամիցի։

Ուրեմն տես՝ որքան նախատելի է ծոյլն 'ի յաղօթից. որ դոլով յամենայնի կարօտ և շրջապատեցեալ 'ի ոչխարս փորձութեանց յերևելեաց և յաներևութից, ոչ զիմմ առ յայնպիսի տուօղն՝ որ ինքն յորդորէ թէ՝ խնդրեցէք և առնուցուք. և թէ՝ եկայք առիս ամենայն վաստակեալք և նեղեալք, և ես հանգուցից զձեզ։

Լուր ուրեմն ով եղբայր այնպիսի առատապարգև կոչողին, և մատիր առ նա. և խնդրեա զինչ և կամիս։ ԼՀթէ հիւանդ ես, կաց յաղօթս. զի եղեկիա աղօթիւք զերծաւ 'ի հիւանդութենէ, և յաւել զկեանս իւր, և ապրեցաւ 'ի ասիսակայ։ ԼՀթէ 'ի նեղութեան ես, աղօթեա. զի երեք մանկունքն աղօթիւք ապրեցան 'ի հրոյն։ ԼՀթէ մեղաւոր ես, կաց յաղօթս. զի Ներնուէացիքն և մանա-

սէ, և այլք բաղումք՝ աղօթիւք արդարացան և դարձուցին զբարկութիւնն Աստուծոյ 'ի քաղցրութիւն։ Այս թէ զպակասութիւն ինչ ունիս, խնդրեա աղօթիւք զի ինքն տուօղն ասէ, խնդրեցէք և առնուցուք. զի որ խնդրէ, առնու։ Քանզի ըստ սրբոց վարդապետաց՝ որպէս կարօտի երկիրս երկնից, զի ընկալցի 'ի նմանէ զցօղ, զանձրև, զջերմութիւն, զլոյս՝ և զայլ ազդմունս. զի առանց նոցա ոչ կարէ ճաւալ 'ի կայի։ Այսպէս և մարդս կարօտի աստուածային պէսպէս շնորհաց և օգնութեանցն. որ առանց նոցա որպէս թէ՝ մեռեալ է ըստ հոգւոյն. թէպէտ և մարմնով կենդանի իցէ։ Ուրեմն՝ որպէս դիմեն աղքատքն առ մեծատունսն. հիւանդք առ բժիշկն. փորձանաւորքն առ կարօղն. և ծարաւիքն առ աղբիւրն. նոյնպէս և մարդս գոլով կարօտ յամենայնի և փորձանաւոր՝ ըստ հոգւոյն և ըստ մարմնոյն. պարտի միշտ զիմել և դեղերիլ առ Աստուած աղօթիւք՝ և խնդրել 'ի նմանէ զշնութիւնս։

Երդ լուարուք. զի տեսակք աղօթից՝ երկու են. այսինքն՝ հասարակական, և առանձնական։ Հասարակական աղօթքն՝ է որպէս վճարումն հասարակական պարտուց մերոց՝ զորս ամենեքեան հասարակապէս պարտիմք Աստուծոյ։ Վասն զի՝ ստեղծ զմեզ յոչնչէ. արար զմեզ բանական. վերստին փրկեաց զմեզ 'ի գերութենէ սատանայի. և յարոյց 'ի մեռելութենէ մեղաց. պահպանէ զմեզ հանապազ. և լնու զպէտս հոգւոց և մարմնոց մերոց։ Այս ամենայն են իբր պարտք 'ի վերայ մեր. և

վճարեմք որպէս թէ զայս պարտս՝ այն հասարակական աղօթիւքն, մինչ ամենեքեանս գնամք յեկեղեցին 'ի կարգեալ ժամուն, և միաբանութեամբ աղօթեմք։

Իսկ առանձնական աղօթքն այն է՝ որ բաց 'ի հասարակական աղօթիցն, երբ՝ և ուր և իցէ, ըստ մեզ ժողովեալ՝ առ Աստուած դիմեսցուք։

Ուրեմն գիտեա. զի հասարակական աղօթիւքն թէպէտ վճարեմք զպարտս մեր որպէս թէ, որպէս ասացաք. սակայն՝ այս ոչ է այնքան շնորհ և հաւատարմութիւն մեզ. զի զպարտս մեր լոկ վճարեցաք։ Որպէս թէ առնուցու ոք յումեմէ զհինգ դեկան փոխ. և յետոյ վճարիցէ նմա զնոյն հինգ դեկանն. արդ՝ զի՞նչ շնորհ արար նա տուողին. զի զոր ինչ առեալ էր, զայն վճարեաց։ Այլ մեծ շնորհ և հաւատարմութիւն առողին այն է, որ 'ի վճարել պարտուցն, զիր մի ինչ ևս աւելորդ եղեալ 'ի վերայ ընծայիցէ տուողին. յայնժամ քաղցրանայ և տուօղն՝ և ևս առաւելապէս տայ նմա 'ի խնդրելն։

Այսպէս և մեք 'ի վճարելն զպարտս մեր հասարակական աղօթիւքն, եթէ առանձնապէս ևս դիմիցեմք առ Աստուած, և յատուկ զաղօթս ինչ աւելի մատուցանիցեմք նմա, (որ է առանձնական աղօթքն). յայնժամ ասիմք հաւատարիմք. և կարեմք ասել ըստ քանքարաշահ ծառային թէ՝ տէր՝ հինգ քանքար ետուր ցիս. ահա զհինգ քանքար ևս 'ի վերայ շահեցայ։ Յայնժամ և Աստուած քաղցրացեալ 'ի մեզ, ասէ ծառայ հաւատարիմ,

«Որովհետև 'ի սակաւուդ հաւատարիմ եղեր, 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քոյ։ Եւ թէ՝ որ ունիցի, տացի նմա և յաւելցի. այսինքն՝ զկնի անցաւոր կենացդ, տաց քեզ և զյաւիտենական կեանսն։

Երդ՝ երկու տեսակ աղօթողաց վախճանն այս է զոր ասացաք։

Իսկ զի՞նչ ասասցուք և վասն այնոցիկ՝ որք ոչ ընդ հաւարակին աղօթեն, և ոչ առանձին։ Ո՞հ. զնոցանէ զանկատէ Աստուած 'ի ձեռն դաւթի թէ՝ որ ուտէր զհաց իմ, արար ինձ խաբէութիւն։ Յիրաւի՝ քրիստոնեայ մի՝ որ 'ի տունն Աստուծոյ ոչ գնայ, զանուանն Աստուծոյ ոչ յիշէ, և ոչ կարդայ առ նա. և ըերանով ասէ թէ՝ ես քրիստոնեայեմ և զՔրիստոս Աստուած պաշտեմ, նա զԱստուած խաբէ. զի զբարիսն Աստուծոյ վայելէ, մարմնոյ և ստանայի հետևի և զնոսա պաշտէ։

Անբան անասունն ճանաչէ զդարմանիչ տէրն իւր. զեզերի միշտ 'ի տան նորա. և ոչ մեկնի 'ի նմանէ։ Իսկ ծոյլն յաղօթից՝ զոլով մարդ բանական, ոչ ճանաչէ զԱստուած զբարերարն իւր. և ոչ զանուն նորա յիշէ՝ և ոչ 'ի տուն նորա հայի որ է եկեղեցի։ 'Ի նախատինս այնպիսեանցն ասէ Աստուած 'ի ձեռն եսայեայ թէ՝ ծանեաւ եզն զըստացիչ իւր. և էշ զմսուր տեառն իւրոյ. և իսրայէլ զիս ոչ ծանեաւ. և ժողովուրդ իմ՝ զիս 'ի միտ ոչ էառ։

Ասածեսցեն ուրեմն այնպիսի աղօթաղուրկ անձինքն թէ՝ որպէս են կալոց առաջի Քրիստոսի 'ի

գատաստանի և զի՞նչ տալոց են զպատասխանիս. և կամ ո՞ր գժոխք կլանելոց է զնոսա։ Անկարծիք այն է պատահելոց նոցա՝ որ պատահեցաւ յիմար կուսանացն. որք մինչ բաղխէին զդուռն՝ ասելով. տէր տէր՝ բաց մեզ. լսէին զպատասխանիս Քրիստոսի թէ՝ ոչ գիտեմ զձեզ. ՚ի բաց կացէք յինէն՝ և թէ երթայք յինէն անիծեալք՝ ՚ի հուրն յաւիտենական։ Քանզի՝ մինչ ես կոչէի զձեզ ողորմութեամբ, ասելով թէ՝ եկայք առիս. խնդրեցէք և առնուցուք բաղխեցէք և բացցի ձեզ. դուք ոչ լսէիք բնաւին և ոչ գայիք առիս. և ոչ ճանաչէիք զիս։ Այժմ և ես ասեմ թէ՝ ոչ գիտեմ զձեզ։ Յորմէ փրկեսցէ զմեզ նոյն Քրիստոս Աստուածն մեր։

Արդ՝ սիրելիք իմ՝ թէպէտ անյարմար էր այսքան երկարաբանելն մեր, սակայն՝ հարկն պահանջեաց՝ որ ՚ի վերայ մեր կայր. սակս այնպիսեաց ժամանց որք դոն յազգիս մերում. որք յիմարացեալք քան զանասունս՝ զդուռն եկեղեցւոյ և զժամ աղօթից ոչ ճանաչեն. ՚ի յերեսս խաչակնքել ոչ գիտեն. և զանուանն Աստուծոյ յիշել և աղօթել ոչ ունին։ Այլ ոչ գիտեն թէ յինչ կոչին, և վախճանն իւրեանց ուր լցէ եկերելոց։ Որք և ոչ միայն ինքեանց պատրաստեն զկորուստ, այլև զաւակաց և ընտանեաց իւրեանց։ Զի զի՞նչ գործէ հայրն, և որդին նմին նման գործէ։ Վասն այսորիկ այսքան երկարեցուցաք, զի զգուշացցին այնպիսիքն՝ և ես ազատիցիմ ՚ի խղճմտանաց և ՚ի պարտուց։

Այլ արդ՝ ասեմ սիրելեացդ իմոց. զի որովհետև այսքան հարկաւոր՝ պիտանի՝ և օգտակար է աղօթ-

քըն մարդոյս յամենայնի, և մանաւանդ՝ 'ի ներ-
կայումս Ժամանակի, որպէս յայտ է ամենեցունց։
Վասն որոյ՝ ես մեղաւորս և կարօտս աղօթից ձե-
րոց՝ և անարժան տեսուչս օրհնեալ աղգիդ խմբ՝
Ժողովեցի զայս համառօտ բանս աղօթից 'ի գրոց
սրբոց՝ և եղի 'ի փոքրիկ տետրակիս՝ և ընծայեցի
հարազատ աղգիդ խմբ՝ որպէս զնորաբողջ և ա-
նուշահոտ ծաղիկ մի և կամ որպէս զղեռահաս և
նախախոյժ պտուղ մի՝ յառաջ եկեալ 'ի հոգևոր
և յաստուածատունկ յայգւոյ ձերմէ. և կամ որ-
պէս զնոր օրհնութիւն մի 'ի սրբոյ Աթոռոյս Էջ-
միածնէ։ Զոր և դուք պարտիք յատուկ սիրով
և ուրախութիւն ընդունիլ վասն երից պատճառաց։
Նախ զի է սա անդրանիկ. ամլածին. և իբր՝ ա-
ւետեաց և սքանչելեօք զաւակ՝ հոգևոր ծնողացս
ձերոց՝ ըստ տպագրութեանն նորոյ՝ Քրիստոսիս յա-
ջողելոյ։ Քանզի՝ 'ի լուսաւորչէն մերմէ մինչև
ցայսօր չէր ծնեալ ձեզ՝ այսպէս զաւակ հոգևոր
ծնօղս ձեր. զի և արբահամ թէպէտ ունէր զբա-
զում զաւակս յայլոց կանանց, սակայն միայն խա-
հակ սիրեցաւ՝ և մեծարեցաւ վասն յաբրահամու
և 'ի սառայէ լինելոյն՝ յետ այնքան ամլութեանն։
Երկրորդ՝ զի լի է յամենայնի հարկաւոր և օգ-
տակար դիտմամբք. և մանաւանդ՝ պատշաճաւոր
ըստ Ժամանակիս. զի կարարն առաւել սիրի 'ի
ժամ պատերազմին քան զսովին։
Երրորդ՝ զի փոքրադիր է և հեշտակրելի, և մա-
նաւանդ՝ պարզ և դիւրաձ. որ յամենայն տեղ-
ւոջ՝ և յամենայն ժամանակի՝ կարելի է առ ձեռն

գտանիլ և լցուցանել զքաւլոյն ճաշակողաց ամենատեսակ համով որպէս մանանայն հնոյ ժողովրդեանն։ Որ և կարէ իսպառ հատանել զպատճառս ծուլոյց, և ընդ վայր տրտնջողաց, որոց՝ սովորութիւն է ասել թէ՝ երկար է. դժուար է. և այլն։

Ուրեմն՝ աւընկալարուք սիրով և բաղձալի յօժարութեամբ, և զբօսարուք հոգևորապէս 'ի սմա՝ գոնէ՝ յօրն անգամ մի։

Նոր Քրիստոս Աստուածն մեր՝ տացէ ամենեցունցս զզգաստութիւն. լուիցէ զաղօթս և կատարեսցէ զինդրուածս սիրով ընդունողացդ. և ինձ աշխատողիս ևս մասն հանցէ յաղօթից ձերոց. ողջ լերուք 'ի սէր։

Ն՛շմարտապէս մեռաւ մարմնով.
զն փրկեսցուք մեք Աստուծով:

Դառնալոյ ու նոր հանուն Է բայց այսինչ որ կարդաց
չարչարանաց վերջ ըստ կարգի արարողութեան՝ որքա-
ոանի Պատարագին հայրապետութեաց։

Նշանակութի զգեստուց՝ որ պատարագին։

Քահանայն՝ նշանակէ զտէր մեր Յիսուս Քրիստոս. որ եղև ճշմարիտ քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. և զենքն՝ի ներքոյ տեսակաց հացի և գինւոյ՝ հօր Աստուծոյ պատարագեաց։

Սաղաւարտն նշանակէ զոգորութիւն յաղթութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ել՝ի պատերազմ ընդդէմ բելիարայ. և արար զերկրութիւն ազգի մարդկան։

Շալիկն՝ նշանակէ զանմեղութի և զմաքրութի վարուց տն մերոյ Յիսուսի Քրիստոսի և զմայլումն նորին երանելանաւ տեսութեն էութեն Աստուծոյ։

Գօտին՝ նշանակէ զողջախոհութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և զանխառնութիւն նորին՝ի զգայականայ ցանկութեանց։

Բազպանն՝ նշանակէ զյօժարութիւն սրտի, և ըզ-
ոպատրաստութի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
առ 'ի կատարել զհաճութիւն հօրն երկնաւորի։

Ուրարն՝ նշանակէ զհնազանդութիւն մեր մերոյ
Յիսուսի Քրիստոսի, առ 'ի լնուլ զկենսագործ տնօ-
րէնութիւնն իւր՝ ըստ նախասահմանութեան հօրն
երկնաւորի։

Շուրջառն՝ նշանակէ զլրումն ամենից առաքի-
նութեանց՝ որով զարդարեցեալքը մարդկութիւն
տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի յսկզբանէ
յդպացմանն իւրոյ։

Մտանելն քահանային 'ի սրբազնատանն՝ նշանա-
կէ զիջումն բանին Աստուծոյ 'ի յարգանդ ամե-
նօրհնեցելոյ կուսին Մարիամու։

Օգեստաւորիլն քահանային՝ նշանակէ զներ-
մարմնութիւն բանին Աստուծոյ 'ի յարգանդի ամե-
ներանուհւոյ կուսին Մարիամու։

Երգելն զպրաց զնորհուրդ խորին՝ նշանակէ զա-
զօթս և զպաղատանս, զոր նախահարքն մատուցա-
նէին առ Աստուած վասն գալստեան տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի։

Լլանելն քահանային 'ի սրբազնատանէն, նշա-
նակէ զծնունդն և զյայտնութիւնն տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի։

Գնալն քահանային առաջի բեմին, նշանակէ զգնալն
տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ա-
շակերտաց իւրոց 'ի լեառն Ձիթենեաց։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ 'ի մերձենալ ժա-

մու չարչարանաց քոյ՝ վասն տագնապաց ոգւոյդ սկսար երկնչիլ և հոգալ։

Շնորհեա՛ մեզաւորիս՝ զի զամենեսեան զհոգս և զտրտմութիւնս իմ՝ վերանուիրիցեմ քեզ՝ ի պատիւ սրբազանից քոյոց չարչարանաց և արդեամբք նոցին ընդունիցեմ զլրկութիւն հոգւոյ իմոյ։

Լուանալն քահանային զձեռս՝ նշանակէ զարտասուելն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի լերինն ձիթենեաց։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ ի յաղօթելն քո արտասուր, փղձկմամբ սրտի հեղեր զարտասուս յաչաց քոց ի լուացումն մեզաց նախահօրն. շնորհեա՛ մեզաւորիս զՀմարիտ զղջումն զի զտիւ և զգիշեր ողբալով զյանցանս իմ, և խոստովանելով զմեղս իմ՝ վերընդունիցեմ զներումն և զթողութիւն յամենառատ աղերսիդ կենաց։

Սրսելն քահանային, խոստովանիմ առաջի Աստուծոյ՝ նշանակէ զանկանիլն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի վերայ երեսաց իւրոց, և զհեղուլն յինքեանէ զբրտաւնս արեան։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ ի սաստկանալ երկանց քոց՝ զայլակս արեան հոսեցեր ի մարմնոյ քումմէ. շնորհեա՛ մեզաւորիս՝ զի ի պատիւ չարչարանաց քոց, փոխանակ արեան՝ հեղից յաչաց իմոց զաղերիւրս արտասուաց։

Ելանելն քահանային ի բեմն, նշանակէ զարձթելն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի բազմիցս ի լերինն ձիթենեաց։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ յաղագս անանդոր-

բութեան որտի՝ քո՝ չոգալ կրկին և երեքկին աղօթել առ հայր քո երկնաւոր. շնորհեա՛ մեղաւորիս գյարատևութիւն 'ի գործս բարիս, կի արժանի լինիցիմ ընդունել 'ի քէն զանդրուածս իմ։

Ասել քահանային 'ի յարկի քում սրբութեան, նշանակ զծնրադրութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի լերինն Ձիթենեաց։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ ծունր կրկնելով առ հայր քո երկնաւոր՝ աղօթեցեր մարդկաբար՝ զի անցցէ 'ի քէն բաժակ չարչարանացն. շնորհեա՛ մեղաւորիս՝ զի յաւէտ ծունր կրկնելով երկրպագանիցեմ կենատուիդ խնամ՝ հոգւով և ճշմարտութեամբ։

Համբուրելն քահանային զսեղանն, նշանակ ըզմանիլն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ համբուրիս նենգութեան, մատնեցար 'ի յուդայէ. շնորհեա՛ մեղաւորիս՝ զի անխարդախ սրտիս, պաշտիցեմ ըզքեզ զամենայն աւուրս կենաց իմոց. և միշտ պատրաստ լինիցիմ առ 'ի կատարել զպաշտօն սիրոյ՝ 'ի դէմս սիրելեաց և ատելեաց իմոց։

Երգելն դպրաց զմեղեդիս, նշանակ զխօսիլն առն մերոյ Յիսուսի Քրիստոսի քաղցրութիւն ընդ յուդայի՝ ընդ ամբոխին 'ի լերինն Ձիթենեաց։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ վասն փրկութեան իմոյ ընդ դատաճանողաց թշնամեաց քոց, քաղցրութեամբ և հեզութեամբ անդորրաբար խօսեցար ընդ նոսա. շնորհեա՛ մեղաւորիս՝ զի ըստ օրինակի կենսատուիդ խնամ՝, ընդ ամենից հալածչաց իմոց և

ատելեաց՝ համբերութեամբ և երկայնմտութեամբ վարիցիմ 'ի փառս անուանդ քում սրբոյ։

Իջանելն քահանային 'ի բեմէն, նշանակէ զկապելն և զածիլն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի լեռնէն Ձիթենեաց 'ի պալատն աննային։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ 'ի յանողորմից և 'ի յամբարշտաց հրէից ըմբռնեցար՝ կապեցար՝ և ածար իբրև զոչխարս. շնորհեա մեզ սուրբս, զի արդեամբ չարչարանաց քոց՝ արձակիցիմ 'ի կապանաց մեղաց իմոց. և կապակցիցիմ սիրով ընդ քեզ հաստատապէս։

Երգելն դպրաց յայս յարկ նուիրանացն, նշանակէ զաղաղակ դպրաց և փարիսեցւոցն ընդ պալատն։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ հեզութեամբ և խոնարհութիւն համբերեցեր խրոխտանաց և սպառնալեաց դպրաց և փարիսեցւոցն՝ վասն փրկութեան իմոյ. շնորհեա մեզ սուրբս, զի երկայնմտութեամբ ըմբերիցեմ ընդդէմ ամենից ոտնահարութեանց՝ երևելեաց և աներևութից թշնամեաց իմոց։

Դառնալն քահանային 'ի բեմն ընդ սարկաւագսն, նշանակէ զտանելն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի պալատն պիղատոսի։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ 'ի քահանայիցն և 'ի ծերոցն մատնեցար իբրև զմահաւարտ 'ի ձեռն պիղատոսի. շնորհեա մեզ սուրբս, զի զօրութեամբ շնորհաց քոց ազատիցիմ 'ի մատնեցմանէ 'ի ձեռն իշխանին խաւարայնոյ և արբանեկաց նորին։

Երգելն դպրացն զշարականն, նշանակէ զամբաս-

1939
94 33-57

տանութիւն և զչարախօսութիւն ամբոխին ժողովեցելոյ։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ ամբաստանեցար ի հրէից վասն իմ իբրև զչարագործ. շնորհեա մեզաւորիս՝ զի շնորհօք և զօրութեամբ քոյոյ անմեղութեան՝ ազատիցիմ ի կեանս իմ ի զրպարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի։

Շրջաբերելն սարկաւագին՝ զսրբազան աւետարանն՝ նշանակէ զշրջաբերումն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի տանէն պիղատոսի առ տունն հերովդէի։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ վասն իմ ի յանօրինաց արհամարհեցար և այպանեցար. շնորհեա մեզաւորիս զի օգնութեամբ սրբազանիդ քոյոյ չարչարանաց զերծանիցիմ ի խայտառակեցմանէ սարսափելւոյ հրապարակին։

Ընթեռնուլն զգիրս մարգարէականս և զառաքելականս, նշանակէ զհարցաքննութիւն հերովդէի և պիղատոսի։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ վասն իմ իբրև զպարտաւոր և զանասգործ կացեր ի յատենի դատաւորացն մեծաւ խոնարհութեամբ. շնորհեա մեզաւորիս. զի ի միւսանգամ քո դալստեանն՝ զուարթերես մատչիցիմ առ դատաւորդ իմ երկնաւոր։

Ընթեռնուլն սարկաւագին զսրբազան աւետարանն, նշանակէ զպարտականիս տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զոր ետ պիղատոսի։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ կալով առաջի պիղատոսի վկայեցեր ճշմարտութեան. շնորհեա մե-

զաւորիս՝ զի հաւատով և սիրով քո ամրացեալ՝ ոչ երկիցեմ 'ի յանօրինաց, և 'ի յանհաւատից բռնաւորաց, այլ համարձակապէս խոստովանիցիմ զքեզ աստուածդ իմ Ճշմարիտ՝ մարմնացեալ, չարչարեցեալ. և խաչեցեալ վասն փրկութեան իմոյ։

Ասելն սարկաւագին զհաւատամքն, նշանակէ զուրացումն պետրոսի առաքելոյն։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ ըստ աստուածայնոյ քում տրամադրութեան՝ թոյլ ետուր պետրոսի, զի զքեզ մարդկապէս ուրանայցէր, շնորհեա մեզաւորիս, զի զքեզ միշտ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ՝ մի Աստուած Ճշմարիտ խոստովանիցիմ. և հաւատայցեմ և դաւանիցեմ։

Դառնալն քահանային առ Ժողովուրդն ասելով խազաղութիւն. նշանակէ զդառնալն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի առ պետրոս։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ աստուածայնով քոյ դթութեամբդ՝ դարձար և ակնարկեցեր առ պետրոս՝ տալով նմա զդէմն և զյորդումն արտասուաց. շնորհեա մեզաւորիս, զՃշմարիտ զդէմն սրտի. զի զտիւ և զդիշեր ողբալով զսխալանս իմ. ընդունիցիմ զներումն և զթողութիւն ամենից մեղաց իմոց։

Առնուլն սարկաւագին 'ի գլխոյ քահանային ըզսաղաւարան՝ նշանակէ զմերկայուցանիլն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի զինուորաց։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ վասն փրկութիւն իմոյ զգեստս նախատանաց զգեցար. զանից և ապտակաց համբերեցեր. շնորհեա մեզաւորիս, զի 'ի

ձեռն ապաշխարութեան մերկանայցեմ ինձէն ըզ-
գեստս պղծութեան. և զգենուցում զշնորհդ քո
երկնային. և կապակցիցիմ ընդ քեզ, զի դու ես
վերագնիչ իմ։

Երգելն զպարաց զարբասացութիւնն, նշանակէ
զկատակիլն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի
զինուորաց։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ վասն իմ փշով
պսակեցար, և եղեգամբ հարկանեցար 'ի հրէից.
շնորհեա մեզ աւրուրս, զի զօրութեամբ սրբազանից
քոյոց չարչարանաց. զերծանիցիմ 'ի փշոց մեղաց
և մերկանայցեմ զամենայն հանդերձս չարութեան.
և լինիցիմ քեզ ճշմարիտ երկրպագու՝ մինչ 'ի
վաղճան կենաց իմոց։

Երգաբերելն սարկաւագին զընծայսն՝ նշանակէ
զածիլն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի պի-
ղատոսէ յարտաքս առ հրէայս։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ վասն կեցութե-
իմոյ ածիս այսր և անդր՝ իբրև զգառն անմեղ, և
իբրև զոչոչ առաջի կարէր անմռունչ կաս. շնոր-
հեա մեզ աւրուրս՝ զի ամենից վշտաց և տառապա-
նաց կենցաղոյս 'ի փառս անուանդ քում սրբոյ՝ ա-
ռանց ձանձրանալոյ համբերիցեմ։

Օրհնելն տալն միմեանց՝ նշանակէ զհաշտու-
թիւնն պիղատոսի և հերովդէի։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ քոյով սրբազա-
նօք չարչարանօքդ՝ պատճառ եղեր հաշտութեան
անիրաւաց զատաւորացն. շնորհեա մեզ աւրուրս,
զի 'ի բաց լքեալ զամենայն խռովութիւնս և զ-

խակալութիւնս՝ ընդդէմ ամենից հաւատացելոց եղբարց իմոց, սիրով և խաղաղութեամբ կենցաղավարիցեմ։

Լուանալն քահանային ձեռս, նշանակէ զլուանալն պիղատոսի ձեռս իւր ի վկայութիւն անմեղութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ ի յանիրաւ դատաւորէն պիղատոսէ լուացամբ ձեռաց նորին՝ անմեղ անարատ գոլ վկայեցար. շնորհեա մեզաւորիս, զի զամենայն աւուրս կենաց իմոց՝ ի մէջ զանազանից փորձութեանց ալեաց ծովու աշխարհիս՝ անմեղութեամբ կենցաղավարիցիմ՝ ի փառս քո։

Սրբելն քահանային զերեսս բերանն, նշանակէ զերիս սուտ վկայսն զոր վկայեցին անկարմարապէս։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ վասն կեղծութեան հաւատացելոց քոց՝ զոպարտեցար ի սատ վկայից. շնորհեա մեզաւորիս, զի հանապազ զմիտս և զխորհուրդս առ քեզ ուղղիցեմ, և ընդ երկնային զօրան՝ զերեսս բերանն քեզ երգիցեմ. և զքեզ ճշմարիտ ստեղծող՝ փրկիչ և փրկագնիչ իմ գոլ ճանաչիցեմ։

Սրբելն քահանային Սէրք կերպք, նշանակէ բգրանն պիղատոսի որ ասաց հրէից, առէք զսա դուք՝ և ըստ ձերոյ օրինացն դատեցէք։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ մատնիս ի յանիրաւ դատաւորէն՝ ի ձեռս ամբարշտացն հրէից, զի վասն իմ չարչարիցիս և մահուխաչէ հանիցիս. շնորհեա մեզաւորիս, զի զօրութեամբ սրբազանից քոյոց չարչարանաց, զերծանիցիմ՝ ի յանիրաւաց

դատաւորաց, 'ի զոլարտութենէ մարդկան և յորոգայթից սատանայի։

Առնուլն քահանային զընծայսն 'ի ձեռն՝ նշանակէ զգանելն և զձաղելն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի պիղատոսէ և 'ի զենուորաց նորին։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ վասն փրկութեան իմոյ գանեցար և ձաղեցար և ապտակեցար. շնորհեա մեզ աւորիս զի օգնութեամբ սրբազանից քոյոց ջարջարանաց զերծանիցիմ 'ի տանջանաց դժոխայնոց և 'ի սպառնալեաց գեհենայն և 'ի կռվահարութենէ խաւարայնոց։

Խաչակնքելն քահանային յաձախ 'ի վերայ սրբբազանի մարմնոյ և արեան՝ նշանակէ զբևեռելն զնաւորաց 'ի վերայ սրբոյ խաչին։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ վասն փրկութեան իմոյ տարածեցեր զբազուկս քոյս արարչագործս և 'ի վերայ խաչափայտին բևեռեցար. շնորհեա մեզ աւորիս, զի զթաղծեալ սիրաս իմ՝ սիրով ընդ քեզ բևեռիցեմ, և մի երբէք 'ի քէն մեկուսացեալ հեռանայցեմ։

Կալն սարկաւագացն ընդ աջմէ և ընդ ձախմէ. նշանակէ զերկուս աւազակս խաչեցեալս յաջմէ և յահեկէ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ վասն փրկութեան իմոյ ընդ անօրէնս համարեցար. և երջանիկ աւազակին զարքայութիւն քո խոստացար. շնորհեա մեզ աւորիս, զի յելանելն հոգւոյս 'ի մարմնոյս. արժանի լինիցիմ լսել զձայն քոյ աստուածային երանաւէտ։

Աստեղն քահանային ընդ որս և մեզ մոյց արաս-
ցես, նշանակէ վերածանաչումն աւաղակին, և ա-
ստեղն յիշեա զիս տէր յարքայութեան քումմ։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ բացեր զաչս մոտաց
աւաղակին, զի զքեզ տէր և Աստուած իւր գոլ
հաւատայր. շնորհեա մեզաւորիս. զբացումն աչաց
սրտի իմոյ զի զքեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ
գոլ մի Աստուած հաւատայցեմ. և յարքայութեդ
քումմ սրբոյ արժանի գոլ դատնիցիմ. և ընդ եկե-
ղեցւոյն խրախուսելով՝ քեզ փառս և երկրպագու-
թիւնս վերառաքիցեմ։

Երգեցն դպրաց՝ զհայրն մեր, նշանակէ զեօթն
բանս, զոր արտաբերեաց տէր մեր Յիսուս Քրիս-
տոս 'ի վերայ խաչին։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ 'ի վերայ խաչին
վասն փրկութեան իմոյ ծարաւեցար. և խաչահա-
նուաց քոց աղօթեցեր. շնորհեա մեզաւորիս. զի
սրբազանիւ քոյով նպաստութեամբդ դառնայցեմ
'ի յախտից մեղաց իմոց. և ներելով իմոց պարտ-
ապանաց՝ քեզ ճշմարիտ հովուիդ իմում հետեւիցիմ։

Խարձրացուցանելն քահանային զընծայսն՝ նշա-
նակէ զաւանդումն սրբազանի հոգւոյն տեառն մեր-
ոյ Յիսուսի Քրիստոսի 'ի վերայ խաչին։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ զհոգի քո ամե-
նամաքուր՝ 'ի վերայ խաչին 'ի ձեռն հօր Աստու-
ծոյ աւանդեցեր. շնորհեա մեզաւորիս, զի օգնու-
թեամբ կենստուիդ իմոյ՝ զհոգի և զմարմին իմ,

հոր քում երկնաւորի՝ յանուն քո յանձն առնի-
ցեմ և տեառնագրիցեմ։

Թանալն քահանային զպատուական մարմինն 'ի
յանապական արիւնն, նշանակէ զներկիլն մարմնոյ
տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի արեամբ։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ ըստ նախագուշակութեանն եսայեայ մարգարէին՝ հնձան հարեր և զհանդերձ մարմնոյ քո ներկեալ արեամբ քով թաթաւեցեր. շնորհեա մեղաւորիս. զի ճաշակմամբ նոցին՝ մաքրիցիմ 'ի բնաւից աղտեղութեց հոգեկանաց. և խկութեամբ սիրոյ ընդ քեզ՝ մինչև ցկեա կոչման իմոյ՝ կապակցիցիմ հաստատապէս։

Դառնալն քահանային առ ժողովուրդն ունելով զընծայսն 'ի ձեռին, նշանակէ զկանգնելն ան մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի գիրկս մօր իւրոյ յետ իջանելոյն 'ի խաչէն։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ յիջանելն քո 'ի խաչէն՝ հանգեար 'ի գիրկս մարիամու անարատի մօր քո. և ցողով արտասուաց նորին կուսականաց՝ առոգանիլ հաճեցար. շնորհեա մեղաւորիս, զի ըստ սիրտ իմ մեղսամած՝ քեզ կենսատուիդ իմում օթեան և առագաստ պատրաստիցեմ. և անդադար զխոցուածս մարմնոյդ՝ ողբալով համբուրիցեմ։

Երկանելն քահանային զմի մասն կենարար մարմնոյն 'ի բաժակն, նշանակէ զիջումն հոգւոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի դժոխս առ նախահարս։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ ըստ ողորմութեանդ քում՝ անձառելոյ՝ իջեր 'ի դժոխս, միաւորեալ աստուածութեամբդ առ 'ի սփոփել՝ և վերածել

գնախահարս. շնորհեա մեզաւորիս, զի ի մէջ դժոխոց մեզաց խմոց՝ արժանի լինիցիմ քում այցելութեանդ, և օգնութեամբ քով՝ յառնիցեմ ի մեռելոտի գործոց խմոց ամէն։

Հաշակելն քահանային զսրբազան մարմին և արիւն տեառն՝ նշանակէ զթաղումն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի երեքօրեայ ի դերեզմանի։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ վասն ազատելոյ զիս ի գերոյ մեզաց, թաղեցար ի դերեզմանի. շնորհեա մեզաւորիս՝ զի թաղելով զամենայն խղճս և զաղտս հոգւոյ իմոյ ի ձեռն զղջման և ապաշխարութեան՝ վերանորիգիցիմ ի փառս անուանդ քո սրբոյ։

Երգելն դպրաց զտաղս. նշանակէ զանդութիւն և զկրճատումն աշակերտաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ քոյով փառաւոր յարութեամբդ՝ զհաւատացեալս քոյս բերկրեցուցեր. շնորհեա մեզաւորիս՝ զի ի յարութեան յաւուրն յետնում. արժանի լինիցիմ բերկրիլ և ուրախանալ ընդ պարս երջանկաց՝ և երանելեաց յարքայութեան քում. ամէն։

Պառնալն քահանային առ ժողովուրդն ասելով՝ կեցո՛ տէր զժողովուրդս քո, նշանակէ զերևիլն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յետ յարութիւրոյ։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ յետ յարութեանդ քո հրաշալւոյ՝ երևեցար անարատի մօր քո և կուսի. և առաքելոյն Թոմայի, և այլոց քոց հաւա-

տարմաց սիրելեաց. շնորհեա՛ մեզաւորիս, զի ըզքեզ ճշմարտապէս չարչարեցեալ խաչեցեալ և մեռեալ մարմնով հաւատայցեմ. և նովին մարմնովն՝ յարուցեալ 'ի մեռելոց խոստովանիցիմ և դաւանիցիմ։

Ասելն քահանային՝ օրհնեա՛լք եղերուք. նշանակի զօրհնութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զոր ետ հաւատացելոց իւրոց 'ի համբառնալն 'ի յերկինս։

Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ 'ի համբառնալն քո 'ի յերկինս, օրհնեցեր զհաւատացեալս քոյս խոստանալով նոցա զմխիթարիչ սուրբ հոգին. շնորհեա՛ մեզաւորիս, զի 'ի բնաւս խորհուրդս, 'ի բանս և 'ի գործս իմ, օրհնութեան քո մատուածայնոյ և շնորհաց հոգւոյդ սրբոյ արժանաւոր իցիմ

Ամէն։

Դարձեալ՝ յաւելուած 'ի նոյն տեսութիւն աղօթից, ընդարձակ բանիւ շարադրեալ։

—

Յայս յոյժ նուէրս՝ տաս՝ զաջոն։

Աստուածանիմ և հաւատամ ամենակատար, ինքնակատար և նախակատար, զհամադոյ և զպաշտելի, երիր զգալի գերագոյ զամենասուրբ զերրորդութիւնն զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին։ Հայր անծին և անսկիզբն՝ ծնող Որդւոյ և յառաջ առաքող Հոգւոյն սրբոյ։ Իսկ որդին ծնեալ 'ի հօրէ նախ քան զյաւիտեանս անմարմնաբար և անժամանակապէս։ Եւ Հոգին սուրբ բղխեալ 'ի Հօրէ անհատարար և անսպառապէս, համադոյակից հօր և փառակից որդւոյ. միութեամբն բաժանեալ յերիս յանձինս, և երրորդութեամբն միացեալ 'ի մի բնութիւն և 'ի մի աստուածութիւն։ Եւ արդ՝ աղաչեմք զքեզ Հայր երկնաւոր. միջնորդութեամբ միածնի որդւոյ քո, և գթութեամբ հոգւոյդ սրբոյ։ Տուր մեզ տէր հոգի զգաստութեան, հոգի խորհրդոյ, հոգի հեզութեան, հոգի զօրութեան.

հոգի խմաստութեան, հոգի գիտութեան, հոգի երկիւղի և աստուածպաշտութեան. և լից ամենայն բարեգործութեամբ. որպէս զի զկամս քո արարեալ յայսմ աշխարհի, եղիցուք արժանի ողորմութեան քում 'ի հանդերձելումն շնորհօքն Քրիստոսի. ընդ որոյ քեզ և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից ամէն։

Յոլովս օգնականին զճաշու շարժականն՝ նոպա՛ պաղօնս։

Իւր թափեալ անուն՝ միածին Որդի Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ, որ յանմահական փառաց խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ, և առեր զմարմին 'ի սուրբ և յանշաղախ կուսէն Մարիամայ, եղեր մարդ ճշմարտապէս՝ անփոփոխելիդ 'ի յէութեան, անցանելով ընդ ամենայն կիրս մարդկային՝ բաց 'ի մեղաց, 'ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար, և կատարեցեր զամենայն ըստ օրինացն, լրումն լինելով մարգարէից և օրինաց. զանմահալի և զանհասանելի անուշահոտութիւն աստուածութեանդ բուրեցեր յաշխարհի՝ հաղորդելով զամենեսեան երկնաւոր և առասպարշիս պարգևիդ, 'ի յոր կցորդիլն զմայլեալ անմահացան տիեզերք։ Իւ արդ՝ դու նոյն ինքն բարերար և բազումողորմ, բաց զբիմն մտաց իմոց հոտոտիլ 'ի հոտոյ անուշիցդ մարմնոյ աստուածութեան քո, և ընկալ զ-

զոթս մեր իբրև զխունկ անոյշ և որպէս զպատարագն աբելի նոյի և աբրահամու, և իբրև զբանաւոր պատարագս սրբոց քոց և սիրողաց անուան քո՝ որք ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ, որոց մասին և մեզ լեցի ժառանգութիւն շնորհօք միածնիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Զոյգ ընդ Սբ աճրն՝ ասա՝ զպաղօնս։

Սուրբ Աստուած անմահ և հզօր՝ որ սրբարանեալ պաշտօիս ի հրեղէն և յանմարմին զուարթնոցն, անլռելի և անդադար օրհնաբանութեամբ. զոր և սերովբէքն սոսկալի և ահեղագոչ ձայնիւ երգեն զերգս երեքսրբեան՝ բարեբանելով զանմահ տէրութիւնդ, և քերովբէքն գովասանական ձայնիւ փառաւորեն զանբաւելի Աստուածութիւդ, և ամենայն զօրութիւնքն վերնական գոհաբանեն երկրպագութեամբ փառաւորելով զամենազօր թագաւորութիւնդ։ Ընդ որս և մեք բանաւոր հօտ քո, և ստեղծուածք անարատ ձեռաց քոց՝ ժողովեալ ի գա իթ սուրբ եկեղեցւոյ քո կալով առաջի աստուածընկալ սուրբ սեղանոյս՝ տկար անձամբ և մեղաւոր շրթամբք երգեմք զերգս երեքսրբրեան որբասացութեամբ, և աղաչեմք զառատաբաշխ գթութիւնդ, ընկալ զպտուղ շրթանց և զբանաւոր պատարագս սրտից մերոց ի հաճոյս քեզ ըստ վերնոցն արժանաւորութեան, և թող մեզ

զամենայն յանցանս մեր, զկամս և զկամս, զգիտութեան և զանգիտութեան, զմտաց և զսրտից, զբանից և զգործոց, զհոգւոց և զմարմնոյ, և զամենայն մտաց անդամոց, որպէս զի լիցի մեզ կարողութիւն արժանապէս օրհնել զքեզ և գովել զանուն քո սուրբ։ Տուր մեզ Տէր մարդութիւն մտաց. զլեզուն սրտից, ճշմարտութիւն շրթանց, զարտասուս աչաց, ամբծութիւն հոգւոց, և սրբութիւն մարմնոյ։ Լցո զմեզ ամենայն առաքինութեամբ, պայծառ հաւատով, աներկբայ յուսով և մաքուր սիրով։ Եւ զարդարեա զմեզ խոհեմութիւն՝ ողջախոհութեամբ, արիութեամբ՝ և արդարութիւն։ Օրհնեցո զմեզ յաղթող լինել ընդդէմ հնարից բանսարկուին, և զամենայն նեռս մսեխս չարին հիզուցանել. արդարութեամբ և աստուածպաշտութեամբ կալ մեալ յաշխարհի ըստ հաճոյից և ըստ կամաց քոց, և յետ ատոմ կենացս զանձնաբարեան վայելել տերամբ մերով. որում փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն։

Աղաւնա՝ ի վայր ուղղութեան է փղոց և ուրբ աւետարանին. և հաւատամքն ասասցէ զոյգ ընդ էջփղոցն։

Աղօթք Սրբասացութեան։

Տէր մեր Յիսուս Քրիստոս, որդի Աստուծոյ և բան հօր, որ ըստ անձնառ բարերարութեան քո,

թէ կամեցար անտես առնել զարարածս ձեռաց քոց, այլ մարդասիրասէս զթացար յազգս մարդկան խոնարհեցար ի հայրական ծոցոյ էնդ Աստուած, առեր զմարմին ի սուրբ կուսէն Մարիամայ, կամաւ Հօր և հաճմութեամբ սուրբ Հոգւոյն, զամենայն զմարդկայինս յանձն առեր կրել բաց ի մեղաց. և զաստուածային մարմինդ քո եռաւր փրկանս փոխանակ բազմաց, ըստ կանխասացութեան անշուշտ հրամանի քո խաչի և մահու համբերելով: Հոգվիդ քաջ զանձն քո եդեր ի վերայ բանաւոր հօտի քո, ժողովել զցրուեալսն ի փարախ կաթուղիկէ սուրբ եկեղեցի քո, լինիլ մի հօտ և մի հովիւ: Վասն որոյ մեք ժողովուրդք և խաշն արօտի քո՝ երկրպագեալ զիմաք խոնարհեալ և ի ծունկս անկեալ աղաչեմք զանբաւ մարդասիրութիւն քո, մի թողուր զմեզ ի ձեռաց քոց, և մի անտես առներ զանբիծ արեամբ քո փրկեալ հօտս. մի տար զմեզ ի փոքր թշնամւոյն և հակառակորդին մերոյ. սրբեա զմեզ ի մեղաց և մաքրեա զմեզ յամենայն անօրէնութեանց մերոց. լուա զսիրտս մեր ի խղճէ չարեաց և փրկեա զմեզ անիրաւութեց. լոյս տուր աչս աչաց մերոց, զի մի երբէք ննջեսցուք ի մահ, մի լիցի տեղի պարծանաց թշնամւոյն, այլ խորտակեալ ջաղխեսցի գլուխս նորին զօրութեամբ ամենայաղթ խաչի քո, և տկարացին զօրութիւնք մեք քեզնայիս նորա: Լս տուր մեզ անարգել և անբռնադատ վճարել զկեանս մեր ամենայն արդարութեամբ հետեւելով լուսոյ շաւղաց և երկնաչուք ճանապարհին, ի վայրի զալարուոջ

բնակեցո զմեզ և առ ջուրս հանգստեան սնո. զի տեսցէ թշնամին ևամաչեսցէ զի քոյ եմք ստեղծեալք և քոյ եմք փրկեալք, զու ես օգնական և փրկիչ մեր, զի բաց 'ի քէն զայլ ոք ոչ գիտեմք և զանուն քո տէր կարդամք զօրհանապազ. մի թողուր զժառանգութիւն քո 'ի ձեռաց քոց, այլ ամենազօր աջ քո՝ լիցի հովանի և պահապան 'ի վերայ պաշտօնէից քոց, բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց, և քեզ փառք յաւիտեանս ամէն։

Ընդ ողջունին՝ տպող՝ գայթօղս գայս։

Արիջնորդ Աստուծոյ և մարդկան՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ամենաբարի և խաղաղարար միջնորդութեամբ քո հաշտեցուցեր զհայր ընդ արարածս, և արարեր խաղաղութիւն երկնաւորաց և երկրաւորաց, հեռաւորաց և մերձաւորաց. և զնոյն խաղաղութիւն շնորհեցեր եկեղեցւոյ քո ասելով, զխաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ։ Եւ այժմ տէր աղաչեմք զքեզ՝ զերկնաւոր և զհաշտարար խաղաղութիւն քո պարգևեա մեզ, զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցուք զկեանս մեր, առանց մեղաց և առանց գայթակղութեան. և սուրբ սրբոտիւ սիրել զմիմեանս որպէս զու զմեզ սիրեցեր,

և դնել զանձն 'ի վերայ ընկերին որպէս դու ե-
դեր, և լինել առ միմեանս գթածք՝ քաղցունք և
բարեբարք, որպէս դու արարեր, հնազանդութիւն
և խոնարհութիւն ծառայել միմեանց, որպէս դու
խոնարհեցար 'ի ծունկս քոյոց աշակերտացն. որով
մարթասցուք լինիլ սատուշածապէս անդամք և
մարմին գլխոյդ մերոյ: Այս դու Տէր ասացէր, թէ
ուր երկու և երեք ժողովեալ են յանուն իմ՝ անդ
եմ ես 'ի մէջ նոցա: Վասն որոյ և մեք ժողո-
վեալ յանուն քո 'ի գաւիթս սուրբ կաթուղիկէ ա-
ռաքելական եկեղեցւոյ, և աստուածային և սուրբ
հոգւունիւս եղեալ մի անձն և մի սիրտ, քան սրբոց
առաքելոցն: Լուր աղաչանաց մերոց մարդասէր
տէր և բնակեա 'ի սիրտս և յոգի ժողովելոցս յա-
նուն քո: Սրբեալ մաքրեա յարդարեա զմեզ լի-
նիլ տաճար և բնակարան ամենազօր շնորհաց քոց.
հեռացո՛ 'ի մէնջ զամենայն խորամանկութիւն և
զնենգութիւն թշնամւոյն, զի սուրբ սրտիւ և մաքուր
մտօք, երկիւղիւ և արդարութեամբ զօրհնապազ
փառաւորեսցուք զամենազօր անուն քո, այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Յորժամ աղաւաղէ աղաւաղեն՝ քան պարձեա՛ առա՛:

Սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեանց. լի են
երկինք և երկիր փառօք քո, սերովբէքն աղաղա-
կեն հրաշալի և հոգեղէն բարբառով առաջի փա-

ռաց աթոռոյ աստուածութեան քո. քանզի զար-
հուրեալ հիասքանչ և 'ի հրաշալի փառաց քոց
ոչ ունելով կարողութիւն արժանապէս փառաւո-
րել զանհասանելի մեծութիւն քո։ Վասն որոյ
անլռելի և անդադար օրհնաբանութեամբ փառա-
ւորեն զմիասնական աստուածութիւնդ, զպաշտելի
և զհամագոյ երրորդութիւնդ։ Զ.ոդ՝ եթէ հրեղէն-
քըն չեն բաւական քոյոյ անբաւութեան, մեք հո-
գևնութեամբս և յերկիր կործանեալքս՝ զՔարդ կա-
ռասցուք բովանդակել բանիւ զանբաւելի գթու-
թիւնդ առ արարածս, և մանաւանդ առ ազգս
մարդկան։ Որ նախ սկզբանն արարչագործ ձե-
ռամբդ ստեղծեր զնախնին մեր զադամ, պատուե-
լով զնա քան զայլ արարածս՝ որ բանիւ միայն
արարան. և յետ պատուիրանազանցութեանն պըտ-
ղոյն ճաշակման, ոչ արարեր անտես զանկեալ
բնութիւնս, այլ եռուր զօրէնս, և առաքեցեր ըզ-
մարգարէս յայտնելով զօգուտն. իսկ պատուրեալքն
'ի պատրողէն ոչ ծանեան զխորհուրդ բարերար
կամաց քոց։ Զ.պա հայրդ երկնաւոր կամելով յայտ
առնել զանճառական սէրդ, կամակցութիւն հոգ-
ւոյն սրբոյ, առաքեցեր զմիածին և զծոցա'ին բա-
նդդ, որ եկեալ մարմնացաւ 'ի սուրբ կուսէն և
նովին մարմնովն համբերեաց չարչարանաց, խաչի
և մահու, և եղև քաւութիւն մեղաց մերոց։ Վասն
որոյ մեք ընդ սերովբէիցն երգեմք նմա ասելով,
սուրբ՝ սուրբ՝ սուրբ տէր զօրութեանց, լի են եր-
կինք և երկիր փառօք քո, օրհնութիւն 'ի բար-
ձունս. օրհնեալ է գալուստ քո յաշխարհս 'ի

փրկութիւն մեզ Քրիստոս Աստուած մեր. օրհնեալ է կենսաբեր տնօրէնութիւն քո. օրհնեալ է փրկաւէտ չարչարանք քո, որով զերծաք ի չարչարանաց և յանչարչարութիւնն վիճակեցաք։ Օրհնեալ է կենդանարար մահն քո, որով փրկեցաք ի դառն մահուանէ, և յանմահութիւն երկնից վերափոխեցաք. որ յաւիժական գոհաբանութեամբ մատուցցուք փառք և երկրպագութիւն բարերարիդ՝ փրկչիդ և Ողորմողիդ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Յոյժամ Աղէք կերէքն սուրբոյնն՝ հայր։

Օրհնեալ է պարգևատուն կենաց, և պարգևն անմահութեան Քրիստոս Աստուած մեր։

Եւ՝ յոյժամ Արբէք ի սմանէ սուրբն՝ հայր։

Օրհնեալ է շնորհն ձրի, և պարգևն անծախելի, կենդանի և կենդանարար մարմին և արիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Յոյժամ հայր երկնաւորն սուրբոյնն՝ այս աղօթս հայր։

Հայր երկնաւոր բարերար և բազում ողորմ Աստուած, տուօղ բարեաց և պարգևիչ կենդանու-

թեան, ամենաբարի բնութեամբդ՝ յաղթեալ եղեր 'ի մարդասիրութենէ, մինչ զի կամաւոր ակից և զարարչակից՝ աթոռակից և հաւասարակից բանդ՝ առաքեցեր յաշխարհ, առ 'ի մարմնանալ 'ի սուրբ կուսէն, և նուիրեն անմեղ և անպարտական մարմնոյն՝ եղև գին և փրկանք ամենայն աշխարհի. զի ետուր զնա 'ի զեղումն, 'ի մահ, և 'ի փրկութիւն, վասն ամենայն հաւատացելոց անուան քո մեծի։ Եւ այժմ աղաչեմք զքեզ, միջնորդութիւն մարմնոյ և արեան միածնի քո։ Հայեաց 'ի հեղումն սուրբ արեան նորա, և յանշնչութիւն նորա 'ի խաչին, 'ի բացումն փրկական աղբերաց նորա, և արեամբ թաթաւումն սուրբ մարմնոյ նորա, և անցո՛ 'ի մինչ զցաւումն պատուհասի յանցանաց մերոց բարեբարութեամբդ քով, զի նորա եմք փրկեալ, խնայեա 'ի զինս սուրբ արեան միածնի քո, և ողորմեա բանաւոր հօտի քոյ յուսացելոցս յանուն քո։

Յորժամ յամենայնի օրհնեալ է պէտն ասէն, հապա՛ զաղօթս։

Արժանապէս օրհնեմք զքեզ, և արդարապէս գովեմք և գոհանամք զքէն տէր Աստուած մեր, որ ըստ բազում ողորմութեան քում՝ անտես արարեր անարժան զործս մեր, և այսմ շնորհի արժանաւորս կացուցեր, վասն միջնորդութեան մարմնոյ

և արեան միածնի քո, հաղորդս լիցուք փառաց աստուածութեանդ քո, միաւորելով ընդ գերապատիւ ճոխութեանդ քո։ Վասն որոյ՝ յամենայնի օրհնեմք, և ըստ ամենայնի գոհանամք զքէն զօրհանապազ, տէր Աստուած մեր ողորմեա՛ մեզ։

Յորժամ ոչինչ ասասցուն ասէն, տապա՛ զսաղմոս։

Հայց կենաց և բաժակ անմահութեան միածին որդի Աստուծոյ՝ տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս՝ Աստուած ճշմարիտ, մանչանդ երկնային խնջեալ ՝ի վերուստ, եղեր կերակուր ամենայն հաւատացելոց քոց. հեղմամբ արեան քոյ՝ ողորմեա՛ բանաւոր հօտի քո, շնորհելով զթողութիւն յանցանաց մեղուցելոցս, ՝ի մահու՝ լե՛ր փրկութիւն հաւատացելոց, և արժանապէս ճաշակողաց զմարմին և զարիւն քո սուրբ։ Յիշեա՛ զիրկաւէտ էարչարանսն քո և զկենատու մահն, զարեամբ ճապաղումն ՝ի խաչին և զանտանելի կիրսն, զոր ընկալար ՝ի մարմնիդ վասն մեր։ Նաեւ՝ ՝ի խոցուածքն՝ արարչագործ ձեռաց և ոտից քոց, և ՝ի բացումն կենարար վտակին որով նորոգեցան տիեզերք, և արբեցան արարածք։ Նովին վտակօքն լուա և մաքրեա զմեզ յամենայն մեղաց մերոց. և թող մեզ զամենայն յանցանս մեր։ Խնայեա՛ արեամբ քո փրկեալ հօտի, և այդ արա մեզ ՝ի միւսանգամ՝ գալստեան արքայութեան քում՝, զի մահու-

ամբ և ջարջարանօք փրկեցեր զմեզ Քրիստոս Աստուած մեր՝ բարերար և նորոգող, և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յորժամ հոգէ՝ այ ասէն, հապա՛ կաղօթէս կայս:

Հոգի Աստուծոյ Աստուած ճշմարիտ, որ նախ յակզբանն շրջէիր 'ի վերայ ջուրց, և ստեղծանէիր զարարածս յոչնչէ, և պէսպէս հրաշսն գործեցեր յաւուրս մարգարէիցն, և 'ի ժամանակի տնօրէնութեան էակցին քո՝ իջեր 'ի յորդանան և 'ի վերնատունն, լցեր զառաքեալսն բազմապատիկ շնորհօք: Եւ այժմ աղաչեմք զքեզ միջնորդութեամբ սուրբ մարմնոյ և արեան փառակցին քո՝ որ բազմաալ կայ 'ի վերայ սրբոյ սեղանոյս, էջ 'ի սիրտ և յոգիս մեր, և մաքրեա զմեզ իբրև զառաքեալսն 'ի սուրբ վերնատանն, և բորբոքեա 'ի մեզ զկայծ սիրոյ աստուածութեդ, զի արժանապէս լիցուք տաճար և բնակարան քեզ և էակից փառակցացդ. և ամենազօր շնորհիւ քո՝ լիցուք փրկեալք յաւուր նորոգման մերոյ, և քեզ նորոգողիդ Աստուծոյ՝ վայելէ փառք յաւիտեանս ամէն:

'Ի ժամ աղաւէլոյսն՝ հապա՛ կաղօթէս:

Յիշեա՛ տէր և ողորմա՛, և օրհնեա՛ զուխտ և զժառանգութիւն եկեղեցւոյ քում՝ սրբոյ, և շնոր-

հեա՛ մեզ զերկնային քո զխաղաղութիւն, զի մի լեցի՛ ի մեզ տեղի և մուտ չարին. հեռացո՛ ի մէնջ զամենայն խարդախութիւն թշնամւոյն, և զբռնութիւն նորա խորտակեա, բարեխօսութեամբ և յիշատակաւ սրբուհւոյ աստուածածնին, և յովհաննու կարապետին, և սրբոյն ստեփաննոսի նախավրկային, և սրբոյն գրիգորի մեր լուսաւորչին, և սրբոց առաքելոց և մարգարէից, և սրբոց հայրապետաց և մարտիրոսաց, ճգնաւորաց և կուսանաց, և ամենայն սրբոց քոց՝ երկնաւորաց և երկրաւորաց, որոց յիշատակն ևս օրհնութեամբ եղիցի՛ ի մէջ սուրբ եկեղեցւոյս՝ և առաջի սուրբ պատարագիս. ամէն։

Զ ոյգ ընդ գոհութիւնն՝ ասա՛ պարզութիւն պայս։

Յիշեա՛ տէր և ողորմեա՛, և զթա՛ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց, որք ուղիղ դաւանութիւն պահեցին զքեզ, և նոքին հաւատով և յուսով ննջեցին ի քեզ. յիշեա՛ զնոսա յաւուր մեծի դալստեան արքայութեան քո, արա՛ արժանի ողորմութեան, քաւութեան և թողութեան մեղաց, դասաւորեա՛լ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն, զի յաւէժական խնդութեամբ և մշտնջենական ցնծութեամբ փառաւորեսցեն զքեզ Քրիստոս, ընդ հօր, և ընդ սրբոյ հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Ընդ հայր ելցին՝ նոյն հայր ելս որ յերկինս սատ՝. զի պէրս-նատէան է։

—

Սրբոյն ոգեղբարանք. 'ի սրբոյ-ն-ն սրբոյն սատ՝։

Օ՜երևեալդ ինձ 'ի փրկութիւն խոստովանիմ ճշմարտապէս մարմին և արիւն Քրիստոսի Աստուծոյ՝ յուսոյ իմոյ, և ազազակեմ առ քեզ՝ մեղայ յերկինս և առաջի քո, սրբեա զիս յամենայն պղծութենէ հոգւոյ և մարմնոյ, շնորհեա ինձ ժամանակ և ցանկութիւն ապաշխարութեան. փրկեա զիս յերևելի և յաներևոյթ թշնամեաց. տպաւորեա զոգուն հոգւոյս և մարմնոյս։ Պարգևեա ինձ բարեգործութեամբ և բարեպաշտութեամբ՝ զքեզ արժանապէս ճաշակել, և փառաւորել զհայր, և զորդի, և զսուրբ հոգի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

—

Եւ յորժամ սատայէն 'ի ա՜ի 'ի ա՜էն, տապա՛։

Խոստովանիմ և հաւատամ, զի դա է ճշմարիտ մարմին և արիւն Յիսուսի Քրիստոսի՝ որդւոյն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի, ոչ մերոցս միայն, այլև՝ ամենայն աշխարհի. հաւատալս հաւատամ, խոստովանիմ և երկիրպագանեմ։

Երբէ՛ ոնգամ գայս սատ։ Եւ այլ պէտքս ի՜ն-դեղբոնծոչ, վասն հէնդանէաց և ոնջէցէլոց։

—

Յորժամ՝ զՔրիստոս պատարագէաշն առէն, ասաց՝ զայսմ՝ ։

Միածին որդի Աստուծոյ և բան հօր՝ արարիչ երկնաւորաց և երկրաւորաց, և լցուցիչ համայն արարածոց, որ լնուս զամենայն յամենայնի, անպարագրելի գոլով բնութեամբ՝ բովանդակեցար 'ի մարմին, զի տեսանելի և շօշափելի լիցիս մարդկային ազգի, վասն որոյ՝ ճաշակելի և կերակուր եղեր ամենայն հաւատացելոց, զի տացես կեանսն յաւիտենականս այնոցիկ՝ որք հաւատով և սրբութեամբ մեձեռնան 'ի քեզ, ըստ անսուտ խոստման քո մարդասէր։ Եւ այժմ մեք փրկեալքս պատուական արեամբ քո՝ հաւատով տեսանեմք զփրկիչդ մեր բոլորապէս պարունակեալ 'ի ներքոյ կրկին տեսակաց՝ հացին և գինւոյն, հոգւով՝ մարմնով և աստուածութեամբ։ յաղագս որոյ՝ երկրպագութիւն մատուցանեմք փրկողդ մերոյ, և աղաչեմք զանբաւ գթութիւն քո։ Լոյծ զկապ մեղայ մերոց, և ընդլեա զձեռագիր մերոյ անօրէնութեան, բևեռեա զմեզ յերկիւղ և 'ի սէր քո սուրբ, զի միշտ գնասցուք արժանի կոչմանն՝ յոր կոչեցեր զմեզ։ Տուր մեզ տէր՝ բանաւոր հօտի քո, յամենայն սրտէ հեռևել միայն զկնի ճշմարիտ հովուիդ և կատարել զկամս քո, և լսել զերանաւէտ բարբառս քո, և ածել օրբստօրէ, պահել զպատուիրանս քո զօրհնասաղ։ Պարգևեա մեզ զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ, զի մի արհամարհեալ լիցուք առաջի քո. մաքրեա զմիտս և զսորհուրդս մեր,

որպէս սրբոց քոց առաքելոցն, զի ընդ նոսին արժանի լիցուք՝ զսուրբ և զարբարար, կենդանի և կենդանարար, զմարմին և զարիւն քո՝ Քրիստոս Աստուած մեր, ճաշակել և հաղորդիլ, յուսով կենացն յաւիտենից, ընդ ամենայն սուրբս քոս, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Յոյժամ էրկիւղաւ և հաւատովն ասէն, ասա՛։

Աստուած մեր, և տէր մեր, երևեցաւ մեզ, օրհնեալ՝ եկեալ անուամբ տեառն։

Զ հնչ ասա՛։

Գոհանամք զքէն հայր ամենակալ, որդիս միածին, և հոգիդ ճշմարիտ, որ ընտրեցեր հաւատացեալքս անուանդ քում սրբոյ, 'ի մասն վիճակի սրբոցն 'ի լոյս, և ըստացար քեզ Ժողովուրդ սեփհական, և արարեր հաղորդ փառաց աստուածութեանդ, և ժառանգորդ անճառ բարութեց քոց. ոչ ըստ մերում արժանաւորութեան, այլ ըստ անբաւ գթութեան քո, որ միշտ շնորհես առատապէս և ոչ նախատես, փոքր պահանջես, և մեծամեծս պարգևես։ Այս՝ օրհնելով օրհնեմք, և գոհանալով գոհանամք զքէն տէր Աստուած մեր, որ յայսմ մասին զմեզ արժանաւորս կացուցեր։ Զաչէմք զքեզ մի թողուր զմեզ 'ի ձեռաց քոց՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան. և եկեսցէ ողոր-

մութիւն քո 'ի վերայ մեր՝ զամենայն աւուրս կեանաց մերոց. և եղիցի անուն քո օրհնեալ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ամէն։

'Ի ՎԵՐՋԻՆ ԶԱՅՍ ԱՂՕԹԻՍ ՏԱՊՈՒ Ի ՔՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

Ակիզբն և կատարումն ամենայնի Աստուած, որ ամենայն բարի 'ի քէն սկսանի և քէ կատարի, և 'ի քեզ բովանդակի ամենայն, 'ի վախճան աղօթիցս՝ ողորմեա մեզ, և լեր ընդ մեզ զամենայն աւուրս կենաց մերոց, և եղիցի ամենազօր աջ քո՝ պահապան մեզ յամենայն ժամ 'ի տուէ և 'ի գիշերի, 'ի նստիլ 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել, և զամենայն գործս մեր՝ 'ի բարին կատարեա ամէն։

Աղօթք առ ուսուցիչ էսպիսպոսն ի մի քանի-
սայսպ աղօթողին զառն մեղայ. այլ ներէսցէ պոպն
դհամարձակութիւնն ՝ի յաղօթէն։

—

՝Ի սկսանելդ, խաչակնքէա՛ զքէնդ եսկոր անգամ։

Օրհնեալ ես Հայր Սուրբ Աստուած ճրշ-
մարիտ։ Օրհնեալ ես Որդիդ Սուրբ Ա-
ստուած ճշմարիտ։ Օրհնեալ ես Հոգիդ Սուրբ
Աստուած ճշմարիտ։ Օրհնեալ ես Մենասուրբ
Երրորդութիւն և մի Աստուածութիւն։ Երարիչ
և նախախնամող ամենայն արարածոց երևելեաց և
աներևութից՝ քաւիչ և ներող ամենայն մեղաւո-
րաց՝ փրկիչ և կեցուցիչ ամենայն նեղելոց և վտան-
գաւորաց՝ որք կարգան առ քեզ։ Յոր և ես ամե-
նաթշուառ ծառայս քո՝ հաւատամ, խոստովանիմ
և երկիրպագանեմ։ Յորմէ և յուսամ յընդունիլ
զթողութիւն մեղաց իմոց. և զփրկութիւն հոգւոյ
և մարմնոյ իմոյ։

Ու արդ՝ անկեալ առաջի ամենասուրբ երրոր-
դութեանդ և միոյ աստուածութեանդ, աղաչեմ

զքեզ մեծաւ հառաջմամբ անոխակալ տէր իմ տուր ինձ համարձակութիւն, մատչիլ առ աղբիւրդ կենաց. և զտանել 'ի քէն զողորմութիւն: Մ'ի բարկանար ինձ վասն բազում մեղաց իմոց, և մի յիշեր զանթիւ չարիսն իմ որ առ քեզ. մի մոռաներ 'ի զատաստան ընդ ամենամեղ ծառայիս. որ ահա ես ինձէն գիտելով զյամենայնի յանցաւոր գոլն իմ, գիտելով և զանչիշաչարութիւն աստուծոյդ իմոյ՝ գիմեմ առ քեզ: Ուրեմն՝ հայեաց ողորմութեամբ 'ի ծառայս քո, և ասա քաղցրութիւն, զի՞նչ կամիս զի արարիցէ քեզ:

Իսկ եթէ արդարութեամբ 'ի զատ մտեալ քննել կամիցես մի ըստ միոջէ զանօրէնութիւնս իմ, ես որպէս կարեմ կեալ առաջի քոյ, և կամ որպէս կարեմ արդարացուցանել զիս:

Քանզի՝ դու ստեղծողդ իմ գիտես զամենասխալ բնութիւնս իմ, և վկայեցեր իսկ ամենաճշմարիտ բերանովդ թէ չար է արարք մարդոյ, և ընդաբոյս է չարութիւնն. և թէ՝ միտք մարդոյ հաստատեալ են 'ի խնամս չարին: Այլ ես գիտեմ, և վկայեմ ճշմարտութեանդ. զի անօրէնութեամբ յղացայ, և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ. ըստ բանի դաւթի ծառային քո:

Այրդ՝ անօրէնութեամբ յղացեալն 'ի բնէ անտի՝ և 'ի մեղս ծնեալն, որպէս կարէ արդարանալ առաջի քոյ. և որպէս կարէ կեալ՝ եթէ դու ողորմութեամբ քով ոչ օգնեսցես: Որպէս և դաւթի ասէր, եթէ ոչ տեառն օգնեալ էր ինձ, բնակեալ էր անձն իմ 'ի դժոխս: Այլ յորժամ սխալէի և

անկանիլ կամՁի, ողորմութիւն նորա օգնէր ինձ։ Ահա այս ողորմութիւնդ է՝ որ տայ մեզաւորաց յոյս, և համարձակեցուցանէ մատչիլ առ քեզ։ Այս ողորմութիւն է՝ որ բանայ զլեզուս համբացելոց մեզոք՝ 'ի կարդալ առ քեզ և գոհանել 'ի քէն զՀնար փրկութեան։ Այս ողորմութիւն է՝ որ դարձուցանէ զբարկութիւն քո 'ի քաղցրութիւն։

Արդ՝ տէր իմ արդար և ողորմած. և ես անօրինեալ ծառայս քո՝ յայս յողորմութիւնս քո ապաւինեալ՝ մատչիմ առ քեզ. և այսու ողորմութիւն իբրու վահանաւ ամրակեմ զիս յահէ՝ արդարութեանդ. և իբր փախստական անկանիմ առաջի աթոռոյ ողորմածիդ Աստուծոյ. և խնդրեմ, զի մի արդարութեանդ մատնեսցես զիս, այլ ողորմութեդ յանձն արարեալ պատասարեսցես զիս. և մի ըստ արդարութեանդ դարձուցանիցես զերեսս քո յինէն, այլ ըստ ողորմութեանդ՝ 'ի մեզաց իմոց դարձուսցես զերեսս քո 'ի յոչ տեսանել զնոսա. և ասասցես յորդորական և դիպալիր բարբառով թէ՝ զէնչ կամիս զի արարից քեզ։ Այս ես խոնարհեցուցեալ զգլուխս իմ, ասեմ թէ՝ լուիցես զաղաչանս ծառայիս քո. և քաղցրութեամբ կատարեսցես զկնդրուածս իմ որ ահա մատուցանեմ քեզ։ Օ՛վ և ես ողորմելիս ողորմեալ 'ի յողորմած Աստուծոյդ իմմէ փառաւորեցից զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԼՔՊՕՒԽ յաՊՈՒԼԻ՝ վասն անչէն ապօՒոպէ։

Այլ արդ՝ ես յետնեալս և անարգագոյնս. ամենաթշուառս և յամենայնի յանցաւորս. միշտ սխալեալս և ամթալեա՝ որ չեմ իսկ արժանի հայիլ յերկինս և տեսանել զլոյս զգալի արեգականն. կամիմ համարձակիլ և ներկայանալ առաջի ամենատես աչաց ստեղծողիդ իմոյ Աստուծոյ, որ ես ամենագէտ և ծածկատես, և զանգործս մարդկան տեսանես։

Բայց՝ զոյս գիտեմ և հաւատամ՝ զի դու ես երկայնամիտ Աստուած՝ ողորմած և ներող. և ոչ կամիս զմահ մեզաւորին, այլ զդարձ և զկեալն։ Վասն որոյ՝ փղձկեալ սրտիւ՝ կորագլուխ անձամբ՝ և արտասուաթոր աչօք՝ անկեալ յերկիր, բաղխեմ ըզդուռն ամենատես ողորմութեանդ քոյ՝ կալնլով զեղջերաց դորին. և վստահանամ յանսուտ հրամանս քոյ թէ՝ խնդրեցէք և առնուցուք. հայցեցէք և գտջիք. բաղխեցէք և բացցի ձեզ։ Ահա՝ խնդրեմ հառաչանօք՝ բաղխեմ կողկողալով. և հայցեմ 'ի քէն մարդասէր Աստուած. լուր զաղաչանս ծառայիս քոյ՝ զոր վերառաքեմ առ քեզ նախպէս՝ վասն իմոյ թշուառական անձինս։ Վայ ինձ, վայ ինձ, և վայ իմոյ անօրինեալ անձինս. զի ոչ գիտեմ թէ՝ ո՞ր երեսօք համարձակեցայց առ քեզ՝ ով Աստուած իմ՝ զոր միշտ բարկացուցեալ եմ մեղօք, և արդէն 'ի նոյն բարկութեանդ ներքոյ կամ։ Զի՞նչ ասացից. և կամ ո՞րպէս խնդրեցից 'ի քէն զթողութիւն մեղաց իմոց. որ ահա՝ ես

կամ 'ի նոյն մեղս ընկղմեալ։ Քանզի գիտեմ հաւատաւ, որ արժանի եմ այնմ սարսափելոյ ձայնիդ թէ յորժամ համբառնայցես առիս զձեռն քո, ես զարձուցից զերեսս իմ 'ի քէն. և թէ յաճախիցես յաղօթս, ոչ լուայց. պիղծք են ինձ նուէրք քո. յագեալ եմ քէն. վասն զի՝ ձեռք քո լիք են արեամբ։

Յիրաւի՝ վասն իմ սպիսեաց անօրինելոց ասացեր զայս 'ի ձեռն եսայեայ. և ես խոստովանիմ տէր՝ զի արժանի եմ՝ ոչ միայն զի զարձուսցես յինէն զերեսս քո, և՝ ոչ լուիցես ինձ, այլև՝ թէ 'ի դժոխս իջուցանիցես կենդանւոյն, արժանի եմ։ Քանզի՝ ես ինձէն գիտեմ, զի մեղաւոր եմ յամենայնի և արժանի դատապարտութեան։

Քանզի՝ ոչ միայն ձեռք իմ են լի արեամբ, այսինքն՝ յափշտակութեամբ և զրկողութեամբ, և այլովքն որք 'ի ձեռս վերաբերին. այլ՝ բոլոր անձամբս լի եմ անօրութեամբ և ամենայն մեղօք։ Ուստի՝ ոչ է բժշկութիւն մարմնոյ իմոյ. և ոչ գոյ խաղաղութիւն ոսկերաց իմոց. և յոտից մինչև ցգլուխս չիք առողջութիւն։ Վասն զի անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, և որպէս զբեռն ծանր՝ ծանրացան 'ի վերայ իմ. որք ահա՝ հանդերձեալ են 'ի դժոխս և 'ի հուրն յաւիտենական ընկղմել զիս՝ եթէ դու ոչ օգնիցես ինձ։

Գիտեմ, գիտեմ, ով Աստուած իմ. զի դու ամենասուրբ ես՝ և զմեղս ատես՝ և 'ի մեղաւորաց զարշիս. վասն այսորիկ զաղօթս նոցա ոչ լսես.

այլ՝ դարձուցանես զերեսս քո՝ որպէս և ասես։ Որպէս և երանելին Դաւիթ ասէր. թէ տեսանէի 'ի սրտի իմում զՄեզ, մի թէ լուիցէ՞ ինձ տէր։ Այլ զմեզս ատեցի և անարգեցի. և զօրէնս տն սիրեցի։ Վասն այսորիկ լուաւ ինձ տէր. և հայեցաւ 'ի ձայն խնդրուածոց իմոց։ Սակայն՝ ով անուխակալ Աստուած. ներող և գթած՝ երկայնամիտ և անյիշաչար։ Գիտեմ և զայս. և 'ի սուրբ գրոց քոց լուեալ եմ, որ 'ի բարկութեանդ, և զողորմութիւն յիշես. և 'ի կեանս յայս՝ զողորմութիդ ածես 'ի գործ յաճախապէս. որպէս յայտնի է առ նինուէացիսն. առ իսրայէլ. և առ յայլս բազումս։ Այլ նոյն սուրբ գրեանքն քո 'ի յիշելն զքեզ, բաղմիցս՝ ողորմած և գթած անուամբ փառաւորեն ըզքեզ. որպէս և դաւիթ ասէ. դու տէր՝ գթած ես և ողորմած՝ երկայնամիտ և բազումողորմ առ ամենեսեան՝ որք կարդան առ քեզ։

Սպաքէն՝ յայտնի է ով Աստուած իմ՝ զի ըստ այնմ որ արդար ես, բարկանաս մեզաւորաց. և ըստ այնմ որ ողորմած ես, ոչ իսկոյն մատնես 'ի կորուստ, այլ երկայնամտելով ներես, և դարձին սպասես։ Որպէս վկայէ դաւիթ՝ ոչ իսպառ բարկանայ մեզ տէր. և ոչ յաւիտեան պահէ ոխս։ Այլ դու իսկ ասացեր օրհնեալ բերանովդ թէ՝ մի՛ թէ կամելով կամիմ զմահ մեղաւորին. ոչ։ Այլ ըզդարձ և զկեալն։ Այլ թէ՝ մեղաւորն յորում պահու յոգոց հանիցէ, կեցցէ։

Ահա՝ յոյս անեղկբայելի. տեղի ապաստանի՝ և յարկ ապաւինի ամենայն մեղաւորաց։ Օրհնեալ

Ի քո ողորմութիւնդ. զովեալ Ի քո գթութիւնդ. և բարեբանեալ քո մարդասիրութիւնդ ով Աստուած մեր: Վասն զի՝ ի բարկութեանդ՝ զողորմութիւն ի գործ ածես. ի դատելդ՝ զհնարս զերծման ցուցանես. ի պատժելդ՝ զնանապարհ ազատութեան ուսուցանես:

Եթէ այսպէս, ապա զինչ փոյթ երկարապէս ճառել այժմ զորքանութենէ մեղաց իմոց. և կամ բանալ առաջի քոյ մի ըստ միոջէ՝ որ զանգործս մարդկան տեսանես. և ի գիրս քոյ զամենեսեան գրեալ ունիս: Այլ մանաւանդ՝ ես մեղաւորս ինքնին ահա՝ խոստովանեցայ զմեղաւոր գոլս իմ ամենայնիւ. որոյ աղագաւ ի ներքոյ բարկութեան քոյ կամ և եմ պարտական դատապարտութեան:

Այժմ՝ ով ողորմած Աստուած իմ. զգործս ձեռացդ, զպատկերս արարչիդ՝ և զգնեցեալս վերստին արեամբդ՝ թողուս խսպառ ի կորնչիլ: Քաւ լիցի ողորմած աստուծոյդ իմոյ, որ զամենեցունց զկեալն կամիս:

Ուրեմն՝ ազաչեմ զքեզ մարդասէր Աստուած. ողորմած Աստուած. ազաչեմ, և զերեսս ի գետին եղեալ՝ արտասուօք թանամ զհող պատուանդանի ոտիցդ՝ և խնդրեմ հառաչանօք. զի ի մառչիլն իմ առ աղբիւրդ ողորմութեան, մի բարկութիւն խրատեր. և մի սրամտութեամբ յանդիմաներ. և մի մտաներ ի դատաստան ընդ ամենապարտաւոր ծառայիս՝ որ յամենայնի տիրերան և անպատասխանի եմ առաջի քոյ: Այլ հայեա յիս քաղցրութեամբ. և լուր զաղաչանս իմ՝ զոր անմաքուր

բերանովս քեզ մատուցանեմ։ Մեղայ յերկինս և առաջի քոյ որպէս զանառակ որդին։ Ի՛ր ընդ առաջ սիրով՝ գրկեա գթութեամբ՝ և համբուրեա ողորմութեամբ։ Թող ինձ զամենայն յանցանս իմ, զոր դու լաւապէս գիտես քան զիս. և ասա օրհնեալ բերանովդ թէ՝ թողեալ լեցին քեզ մեղք քո։

Դու ասացեր մարդասէր Աստուած թէ՝ աւա՜ զանօրէնութիւնս քո զի արդարացիս։ Ահա՝ ասացի և ասեմ. մեղայ և անօրինեցայ միշտ առաջի քոյ. մեղայ քեզ տէր՝ և առաջի քոյ արարի զչար։ Ուրեմն՝ արդարացո՛ զիս ով ճշմարտարանդ Աստուած։

Դու ասացեր մարդասէր Աստուած թէ՝ մեղաւորն եթէ դարձցի առիս, ես զթացայց ՝ի նա. և ՝ի ծով ընկղմեցից զամենայն մեղս նորա։ Ուրեմն՝ կացո զբանս անլուծանելի հրամանաց քոց ով զբթած Աստուած. զթա՛ ՝ի մեղաւոր ծառայս քո՝ որ առ քեզ եմ դիմեալ. և ընկղմեա՛ ՝ի խորս անհուն ողորմութեան քոյ զամենայն մեղս իմ։

Դու ասացեր մարդասէր Աստուած. ես եմ որ ջնջեմ իբրև զմէգ զմեղս քո՝ և զանօրէնութիւնս քո ոչ ևս յիշեցից։ Ուրեմն՝ հաւատեա՛ առիս զքան քո ով անսուտդ Աստուած. ջնջեա՛ զամենայն մեղս իմ և անհետ արա. հա՛տ և չորացո խոպառ զարմատ մեղայ իմոյ՝ զի մի ևս երևեսցի յիս, և բարկացուցանիցէ զքեզ։

Դու ասացեր մարդասէր Աստուած. եթէ իցեն մեղք ձեր իբրև զծանձաղարիթ, իբրև զձիւն սպիտակ արարից։ Կատարեա՛ առիս զքան քո ով կա-

րօղ Աստուած. զսևացեալս մեղօք՝ սպիտակացո՛ և սուրբ արա յամենայն աղտեղութեանց։

Դու ասացեր տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիստոս՝ 'ի ժամանակս փրկագործութեան քոյ թէ՝ ոչ եկի կորուսանել, այլ կեցուցանել. և թէ՝ ո՛չ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս։ Արդարացո՛ զբանս քո տէր իմ. կեցո՛ զմեռեալս մեղօք՝ և մի՛ թողուր կորնչիլ՝ զոր պատուական արեամբդ գնեցեր. Կոչեա՛ և զամենամեղաւորս 'ի կապանաց մեղաց՝ և 'ի բանտ դժոխային գործոց՝ առ քեզ սիրով՝ որպէս զսիրելին քո զաղարոս և կենդանացո՛։ Եւ ուրախացո՝ զհոգի և զմարմին իմ շնորհօքդ՝ որպէս զքորսն նորա։

Դու ասացեր Տէր իմ Յիսուս թէ՝ եկայք առիս ամենայն աշխատեալք և ծանրաբեռնեալք՝ և ես հանգուցից զձեզ։ Իրաւացո՛ զբանս քո առիս տէր իմ։ Ահա ես աշխատեալս 'ի պէսպէս մեղս՝ և ծանրաբեռնեալս անօրէնութեամբ՝ դիմեալեմ առ քեզ. ուրեմն՝ բարձ զծանրութիւն մեղաց իմոց. և թեթևացո՛ զտառապեալս ո՛վ հանգիստդ աշխատելոց և քաւիչդ մեղաւորաց։

Ո՛վ տէր իմ Յիսուս Քրիստոս՝ զառնդ Աստուծոյ և բարձող մեղաց աշխարհի. դու վասն այսորիկ կրեցեր զայն քան սարսռելի չարչարանսն. և հեղլով զպատուական և զանգին արիւնդ՝ պատարագեցար 'ի խաչին. զի փրկեսցես զմեզ 'ի դժոխոց, 'ի յաւիտենական մահուանէ և կեցուսցես։

Արդ՝ զնոյն սոսկալի չարչարանդ և զպատուական արիւնդ միջնորդ արկանեմ առ քեզ, և աղա-

չեմ. զի և ես մի եմ 'ի փրկելոցդ և կեցուցելոցդ: Երա՝ զի մի՛ ես մեռանիցիմ 'ի մեղս և կորիցեմ յաւիտենականատէս. և սուրբ արեանդ քո հեղումն 'ի զուր լինիցի վասն իմ: Ուրեմն՝ 'ի սրտուական արիւնդ քո խնայեա՛ ով տէր իմ. թող ինձ զամենայն մեղս իմ՝ զորս մինչև ցայժմ գործեալ եմ յիմարութեամբ իմով: Այլ այսուհետև զսիրտս սէր և զհոգի ուղիղ նորոգեա՛ յիս. զի մի՛ ես մեղցեմ:

Տուր ինձ զերկիւղ քո սուրբ. և բևեռեա՛ 'ի նա զհոգի, զմիտ և զմարմին իմ: Որպէս զի՝ միշտ երկնչեցիմ ես 'ի սպառնալեաց և 'ի դատաստանաց քոց. և խորշեցիմ և հեռանայցեմ 'ի մեղաց և յամենայն թիւր գնացից. և զգուշանայցեմ միշտ 'ի յօրէնս և 'ի պատուիրանս քոյ և 'ի մտի ունիցիմ հանապազ զսոսկալի օր մահուն իմոյ և զահագին դատաստան քոյ:

Սուրբ պահեա՛ տէր իմ, զհոգի, զմիտ, զպշտամբութեանս և զամենայն զգայարանս մարմնոյ իմոյ՝ յամենից յանհաճոյից քոց. 'ի չար մտա՛մանց, յաղտեղի խորհրդոց. յարատ հայեցուածոց. 'ի մեղսաւոր լրոց. 'ի դատարկ և 'ի յանպատշաճ խօսակցութեանց, յարտուղի ընթացից, և յամենայն մեղսածին շարժմանց:

Աղաչեմ զքեզ տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիստոս. փրկեա՛ զիս և պահպանեա՛ յամենից թշնամեաց և յորոգայթից նոցին և 'ի բնաւից փորձութեանց հոգեկանաց և մարմնականաց. և մնաւանդ 'ի ներկայական վշտաց և փորձանաց. (Ամէն ասենք զմիշտ՝ ինչ, միշտ՝ յարդիւնս):

Լ՝ը ընդէս հանապազ 'ի յօգնել. և յընկերել ինձ 'փութ՝ յամենայնում ժամու. 'ի տուէ և 'ի գիշերի. 'ի տան և 'ի յառնել. 'ի գործել և 'ի հանգչել. որպէս զի մի երբէք սասանեցայց։ Վասն զի՝ 'ի քեզ անկայ ես յարգանդէ մոր իմոյ. դու ես յոյս իմ և ապաւէն 'ի մանկութենէ իմմէ. դու ես յոյս իմ 'ի ծերութեան իմոյ. և դու ես յոյս իմ և ապաւէն 'ի մահուան իմոյ՝ և 'ի միւսանգամ գալստեանն քոյ. դու ես, և ոչ այլ ոք։

Տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիստոս. ահա հոգւովս, մտօքս, մարմնովս՝ և ամենայն պարագայիւքս, զիս յանձնեմ 'ի քո անչուն ողորմութիւնդ. և խնդրեմ, զի մի զրկիցես զիս 'ի շնորհաց քոց. մի մերժիցես 'ի խնամոց քոց. և մի թողուցուս զիս 'ի կամս անձին իմոյ գնալ. այլ 'ի շնորհս քո պահեսցես. 'ի խնամս քո կառավարեսցես. և 'ի կամս քո առաջնորդեսցես ինձ։ Որպէս քո օրհնեալ կամացդ հաճոյ է, այնպէս առաջադրեսցես ինձ առնել և շարժիլ՝ որ քան եմ 'ի կեանս այս։

Իսկ՝ և 'ի վճարիլ կենաց իմոց, աղաչեմ զքեզ տէր իմ. քոյ անարատ ծնողիդ միջնորդութեամբն. սրբոյն յոհաննու կարապետին. սրբոյն ստեփաննոսի նախավկային. և սրբոց քոց առաքելոց. և սրբոցն՝ թադէոսի և բարդուղիմէոսի և սրբոյն գրիգորի լուսաւորչայն մերոյ. և համայնից սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց աղօթիւքն և բարեխօսութեամբն. քո սուրբ նշանացն, սրբոյ Խաչի քոյ կենսատուի. սրբոյ կողմանուխ Պեղար-

գեանդ քոյ. սրբոց սոսկալեաց Թևեռաց և Փշեղէն պսակին քոյ. և այլոց սրբոց գործեացն քոց չարչարանաց շնորհօք և միջնորդութեամբն, տուր ինձ՝ արթուն մտօք, ուղիղ դիտաւորութեամբ, ճշմարիտ հաւատով, աներկբայ յուսով, առաքինական գործով, ստոյգ խոստովանութեամբ, ջերմագին զղջմամբ, սրբոյ և կենարարի Մարմնոյ և Արեան քոյ հաղորդութեամբ գալ առ քեզ. և արժանանալ քումդ ամենացանկալի տեսութեան. և ընդ սրբոց երջանկաց և սիրելեաց քոց փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք ապաւաղէան ժամու:

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո: Օրհնեալ համագոյ և միասնական անբաժանելի սուրբ Երրորդութիւնդ՝ Հայր և Որդի և սուրբ Հոգի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Զոհանամ զքէն տէր իմ և Աստուած իմ, և օրհնեմ և փառաւորեմ զսուրբ անուն քո. որ պահեցեր զանարժան և զմեղաւոր ծառայս քո 'ի գիշերիս յայսմիկ յամենից վտանգից և 'ի փորձութեանց. և հասուցեր խաղաղութեամբ 'ի ժամ առաւօտուս, և արժանացուցեր տեսանել զլոյս ողորմութեան քոյ:

Եւ այժմ աղաչեմ զքեզ տէր իմ և Աստուած իմ. պահեա զիս և 'ի տունջեանս յայսմիկ նոյն ամենաղօր աջովդ. և փրկեա յամենից ընտանեաբեր պատահմանց. 'ի յերևելի և յաներևոյթ թշնամեաց, և յամենայն մեղսաբեր խորհրդոց՝ բանից և գործոց: Եւ զգնացս իմ ուղիղ արա. զի մի տիրեսցեն ինձ ամենայն մեղք:

Առաջնորդեա ինձ 'ի խորհուրդս բարիս, 'ի բանս ճշմարիտս, և գործս անմեղաձիս և օգտակարս:

Դու լեր վերակացու և առաջնորդ սխալական ծառայիս քոյ յամենայն գնացս իմ. և փրկեա 'ի գայթակղութենէ դիւին 'ի հասարակ աւուրս. և զգործս ձեռաց իմոց ուղիղ արա և յաջողեա ինձ: Եւ դու պատրաստեա զպիտոյս հոգւոյ և մարմնոյ իմոյ: Եւ հասո խաղաղութեամբ՝ առանց մեղաց և փորձանաց 'ի ժամ երեկոյին: Օ՛վ և յայնմ ժամու փառաւորեցից զսուրբ Երրորդութիւնդ՝ որում միշտ վայել է փառք յաւիտեանս յաւիտենից ամէն:

ԱՂՕԹՔ՝ 'Ի ՅԵԼՍ ԱՊԻՈՒ 'Ի ԾԱԳՄԱՆ:

Լոյս 'ի լուսոյ ծագումն՝ արեգակն արդար, անծառ ծնունդ հօր որդի յառաջ քան զարև անուն քո գովեալ ընդ հօր, 'ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա 'ի հոգիս մեր՝ զլոյս քո իմանալի:

Աղօթք՝ յերեկոյի ժամու ասա՛։

Հոգի Աստուծոյ որ յայսմ ժամու ահագին շընչմամբ իջեր 'ի վերնատունն բաժանելով զհրեղէն լեզուս, եկ և առ մեզ յերրորդ ժամուս, և լե՛ց զմեզ ամենայն բարութեամբ քո՝ իբրև ըզսուրբ զառաքեալսն, հանգչելով 'ի սիրտս մեր յաւիտեանս յաւիտենից ամէն։

Աղօթք՝ մէջերեայ ժամու ասա՛։

Արեգակն արդարութիւ՛ տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ծագեցար 'ի հայրական ծոցոյ, արձակելով զճառագայթս քո յամենայն տիեզերս։ Ծագ զաչս սրտից մերոց՝ տեսանել զհամափիւռ լոյս քո, և հեռևել շաւղաց քոց. հալածեա՛ 'ի մէնջ զզեն ձանձրութեան, որ յայսմ ժամու մարտնչի ընդ մեզ, ջերմացուցանելով զմեզ 'ի մեղս և 'ի սէր հիւթանիւթիցս. քոյին շնորհօք փրկեա՛ զմեզ յամենայն մեքենայից նոցա ամէն։

Աղօթք՝ յերեկոյին 'ի ժամ ննջման։

Գոհանամ զքէն Տէր իմ և Աստուած իմ և օրհնեմ և փառաւորեմ զսուրբ անուն քո. որ պահեցեր զանարժան և զմեղաւոր ծառայս քո 'ի

տունջեանս յայսմիկ. և հասուցեր խաղաղութեամբ 'ի ժամ երեկոյիս։

Այլ այժմ աղաչեմ զքեզ տէր իմ և Աստուած իմ. որ արարեր զի� 'ի գործել՝ և զգիշերն 'ի հանգչիլ տար բնութեանս մերոյ. արդ՝ տուր ծառայիս քոյ ննջել մարմնով՝ և մնալ արթուն հոգւով և մտօք։

Տէր իմ և Աստուած ահա ես ննջեմ, և անկեալ դնիմ որպէս զի անկենդան. և ոչ գիտեմ զերբ՝ և զորպէս յառնելս իմ. վասն որոյ զհոգիս, զմարմին և զամենայն պարագայս իմ յանձնեմ 'ի յանհուն ողորմութիւնս քո. և խնդրեմ, զի դու ամենազօր աջովդ քս կնքեսցես զսեղի և զյարկ, զել և զմուտ ծառայիս քոյ. որով ննջեցից ապահով և աներկիւղ. խաղաղութեամբ և առանց փորձանաց։ Պահպանեա զիս յամենից թշնամեաց հոգեկանաց և մարմնականաց՝ և յորոգայթից նոցին. փրկեա զիս յիրէն՝ որ շրջի 'ի խաւարի. 'ի գիշերային երկիւղէ, 'ի գիւական ցնորմանց, և 'ի զարհուրեցուցիչ երևմանց։ Աքեա զվիտս իմ յամենից թիւր մտածմանց, յաղտեղի խորհրդոց, և յամենայն մեղսածին շարժմանց։ Կացո պահապան և վերակացու յանցաւոր ծառայիս քոյ՝ զբանակս երկնայնոցդ զենուորութեանց ընդ իմոյ հրեշտակին. և զնշան ամենայաղթ խաչի Քրիստոսիդ. որովք ննջեցից ապահով և աներկիւղ 'ի գիշերիս յայսմիկ, և ժամանեցից խաղաղութեամբ 'ի ժամ առաւօտուն. զի և յայնմ ժամու փառաւորեցից զհայր և զորդի և զսուրբ հոգիդ՝ որում միշտ վա-

յելէ փառք և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Յոյժամ 'ի մահիճ հիւանդէս, զա՛յս ասա՛։

Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ անապական սէր մարմնովդ իջեր 'ի դերեզման, նոյնպէս և յարեար 'ի մեռելոց, շնորհեա՛ մեզ տէր՝ անապական խորհրդով ննջել 'ի մահիճս, և սրբութեամբ յառնել 'ի մահահանգոյն քնոյս, ո՛չ ունելով զնշան աղտեղութեան 'ի միտս, 'ի սիրտս և 'ի հոգիս, շնորհո՛ք փրկչէդ և ազատողդ մերոյ ամէն։

Ապաշխարեա՛ 'ի մէջ գիշերի։

'Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանիմք ըզքեզ տէր, փառաւորելով զանուն քո սուրբ, և խնդրեմք 'ի քէն, հեռացո՛ 'ի մէնջ զխաւարային խորհուրդս՝ 'ի պատրանաց բանսարկուին պահելով՝ շնորհիւ ողորմութեան քո ամէն։

Ապաշխարեա՛ յոյժամ 'ի հնոց պայքարեցեալ, տապա՛։

Օրհնեա՛լ է մեռեալն և յարուցեալն 'ի մեռելոց Քրիստոս Աստուած, որ զարթոյց զիս 'ի մա-

հահանգոյն քնոյ, խաղաղութեամբ անցուցանելով զգիշերս, աղաչեմ և խնդրեմ, զի զմնացեալ ժամանակս խաղաղութեամբ պահեսցէ շնորհիւ և ողորմութեամբ իւրով ամէն։

Աղօթք՝ յոյժամ 'ի Փոքր ինչ՝ ՀԷՆ պրկեալ։

Զգործս ձեռաց մերոց՝ ուղի՛ղ արա՛ 'ի մեզ տէր, և զգործս ձեռաց մերոց՝ յաջողեա՛ 'ի մեզ։

Աղօթք՝ յոյժամ ԷՀԷՆԷՑՆ ՀԱՄԵՆԷՆ։

Զայր արիւնահեղ և զնենգաւոր՝ պիղծ առնեա դու տէր, այլ՝ ես ըստ բազում ողորմութեան քում, մոից 'ի տուն քո և երկիրպագից 'ի տաճար սուրբ քո. երկիւղիւ քով։

Աղօթք վասն հաւատքի ՆԱՀԷՑԷԼոց, և ՀԱՆԱՒԱՆՔ վասն ընդհանէսոց և էրանաւորոց։

Ամէն և աղաչեմ և խնդրեմ 'ի քէն ով բաղմագութ Աստուած՝ վասն ազգիս մերոյ հնոց և նորոց և համբրէն հաւատով և յուսով 'ի քեզ նընջեցելոցն։ Այս մանաւանդ՝ վասն իմոց մարմնաւոր և հոգևոր ծնողաց. եղբարց. քերց. ազգականաց, սիրելեաց և բարեկամաց. և հոգևոր վարդապե-

տաց. ՝ի բարիս ՝ի բրթողաց և ուսուցչաց. և ամենայն աշխատաւորաց և երախտաւորաց մերոյ՝ ՝ի քեզ ՝ն՝ի՛ջ՝ն՝ելոց: Օ՛՝ որս յիշեսցես յողորմութիւնս քոյ յաւուր մեծի դալստեան քոյ. թողութիւն շնորհեսցես ամենայն մեղաց և սխալանաց նոցին. և դասեսցես ընդ սուրբս քո յաջակողմանն դասուն. և տացես լսել զերանութիւն բարբառն քո թէ՝ եկայք օրհնեալք հօր իմոյ: Այլ ըստ երախտեաց նոցին որ առ մեզ՝ միայն բիւրապատիկս հատուսցես ՝ի հոգիս նոցա. և զմեզ անդատապարտս արասցես ՝ի նոցին սպասուցն. և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք վասն թշնամեաց և հալածչաց:

Աստ՝ ով ողորմած և բազմագութ Աստուած իմ Յիսուս Քրիստոս. վասն իմոց ընտանեաց և բարեբարաց խնդրեցի զբարիս և զողորմութիւնս ՝ի քէն՝ որպէս հարկն է, և արհանջէ օրէն բնութեանս մերոյ: Այժմ աղաչեմ զքեզ և վասն իմոց թշնամեաց. որպէս և դու իսկ ասացեր օրհնեալ բերանովդ թէ բարի արարէք ատելեաց ձերոց: Ուրեմն՝ անկեալ առաջի քոյ խնդրեմ յամենառատ ողորմութենէդ, զի ողորմասցիս և իմոց ամենից թշնամեաց և ատողաց. չարակամաց և վնասատուաց. և այլոց ամենեցունց՝ որք զծառայս քումմէ զչարիս խորհին և խօսին գործեն, և գործել կա-

մին. որք բամբասեն՝ վատաբանեն, և հպհոյեն զես՝ թէ իրաւամբ, և թէ անիրաւամբ. մի բարկանար նոցա վասն իմ՝ տէր իմ. այլ՝ ներեա՛ և թող զմեղս նոցա։

Քանզի՝ նոքա առես մեղանչեն՝ որ յիրաւի մեզուսոր եմ՝ և արժանի ամենայն բամբասանաց և նախատանաց։ Այս առ քեզ մեղանչեմ՝ որ արդար ես յամենայնի, և միշտ բարերար ինձ։ Ուրեմն՝ եթէ նոքա արժանիք են բարկութեան քոյ, ապա՝ բիւրապատիկ ես եմ որդի բարկութեան և արժանի պատժոց քոց զնոսա։

Վասն այսորիկ՝ աղաչեմ զքեզ տէր իմ՝ որ ես աղբիւր ամենայն բարութեանց՝ և ծով անհուն ողորմութեան. զի ողորմեսցես նոցա՝ և ինձ ընդ նոսա. և ներեսցես ամենից սխալանացն՝ որք առես. և զարձուսցես զնոսա 'ի չարեաց, փոխարկելով 'ի բարիս։ Որպէս զի ամենեքեան զգաստացուք՝ ըստ հաճոյից քոց զնասցուք. և փառս վերառաքեսցուք քեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ ՈՍՔԷՐՔԱԿԱՆՔ. ՔՍԱՆ ՀԱՍԱՐԱԿ ԱՍԳԷՆ ԽԵՂԷՂԵՑՈՍ ՀԱՅՈՑ։

Լու արդ՝ տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիստոս, ես ամենասխալ և բազում չարեօք և անօ-

բէնութեամբ լցեալ ծառայս քո՝ արդէն յերկիր խոնարհեալ՝ կորագլուխ անձամբ և մեծակամ ողբով 'ի խորոց սրտէ հառաչեմ առ ամենագիտակ աստուածդ իմ, և աղաչեմ ։ Վասն ողորմելոյ և անտիրացելոյ ազգիս մերոյ աղաղակեմ առ քեզ՝ թէ ողորմելեաց ողորմած. անտիրացելոց տէր. անճարացելոց ճար. անօգնականից օգնական. անյուսից յոյս և սպասէն. նեղելոց և վշտացելոց հանգիստ և մխիթարութիւն ։ Գոչեմ առ քեզ մեծաւ թախանձանօք, բաց տէր զաչս քո, տես զողորմելութիւն մեր. տես զվոքրիկ հօտս քո թէ՝ որպէս է ցրուեալ և տարագրեցեալ ընդ ամենայն երկիր և մատնեալ 'ի ձեռս օտար տերանց և թշնամեաց. զրկեալք 'ի սեղուէ բնակութեանց և 'ի հայրենեաց իւրեանց ։

Ո՛հ. որք են որպէս զնաւ զեկաբեկ տատանեալք յալեաց ծովու՝ առանց զեկավարի և որպէս զոչխար մոլորեալք 'ի յանապատի առանց հովուի ։ Այլ ոչ ունին զմօսէս որ առաջնորդեսցէ. և ոչ ունին ըղձեսու որ ընդդէմ թշնամեաց կացցէ. և ոչ ունին զդաւիթ՝ որոց վասն զհաճոյական պատարագս մատուսցէ քեզ և զսուրբ բարկութիւն քոյ յետս դարձուսցէ ։ Այլ ոչ ունին զմարգարէ, թագաւոր, իշխան, և առաջնորդ. և ոչ զօգնութիւն ինքն յաւետեքէ ։

Իշխանք մեր և ազատազունք՝ մերկացեալք յիշխանութենց և յընչից՝ և անկեալք ընդ իշխանութեամբ այլոց՝ ծառայեն ողորմելաբար ։

Հասարակ ժողովուրդք մեր գրաւեալք 'ի ներ-

քոյ ծանր լծոյ և հարկի այլազգեաց՝ հաղիւ թէ հայթհայթանօք գտանեն զապրուստս կենաց իւրեանց և որոց զերմանեալսն և զվաստակսն այլք ուտեն և վայելեն։

Սկզբեցիք վայելչագեղք և վանոքայք պայծառաշէնք՝ որք յանուն քո և 'ի յիշատակ սրբոց քոց սիրելեաց կառուցան. հոգւոյդ սրբոյ օծմամբն կընքեցան. և ամենայաղթ խաչիդ նշանաւն պսակեցան։ Յորս մատչիւր պատարագ գառնդ Աստուծոյ 'ի փրկութիւն աշխարհի. յորս կատարէին սրբազործ և հոգեկեցոյց խորհուրդք քո։ Յորոց ելանէին և վերառաքէին առ քեզ ձայնք օրհնութեց և փառաբանութեանց, բուրմունք հոգևորականք, նուէրք հաճոյականք և ալօթք հաշտարարք։ Որք ահա ըստ մեծի մասին ամայացեալք և ապականեալք, դողոց և գազանաց օթարան են դարձեալք։

Յիրաւի՝ ձգեաց թշնամին զձեռն 'ի ցանկալիսն քոյ։ Ա՛տին հեթանոսք 'ի ժառանգութիւնս քոյ և սրբեցին զսուրբ տաճարս քո։ Սրահք և սրբութիւնք նոցա դարձան յապականութիւն։ Սուգ առին ճանապարհք նոցա։ Հատան երթևեկ տօնից տարեկանաց նոցա։ Լռեցին 'ի նոցանէ ձայնք օրհնութեց և փառաբանութեց։ Գազանք և յաւիրշտակօղք մուտ և ել առնեն 'ի նոսա։ Աքանչելաբար դամբարանք և բժշկարար նշխարք սրբոց քոց որք 'ի նոսա, կոխան եղեն ոտից անսրբոց և սրբոծոց. քահանայք և պաշտօնեայք նոցա հալածեալք փախստեայք աստ և անդ, շատքն ևս դերեցեալք, ցպանեալք և անյայտ եղեալք։ Ուստի՝ եղաք մեք

մեսցորդքս նախատինք դրացեաց՝ և այլն կա՛ռականաց թշնամեաց մերոց։

Արդ՝ այս ամենայն եկին և գան՝ ի վերայ մեր վասն մեզաց մերոց։ Քանզի մեք մեղաք, անօրինեցաք, և ապստամբեցաք ի քէն. վասն այսորիկ և դու թոյլ եատուր այս ամենայն չարեաց գալ՝ ի վերայ մեր և տիրել մեզ, և մատնիլ՝ ի ձեաս թշնամեաց՝ տերանց ապստամբողաց. որպէս ահա եմք տառապեալք՝ ի վերայ ամենայն երկրի այսօր վասն մեզաց մերոց։ Ուրեմն՝ աստուծոյդ մերում արդարութիւն. և ամօթ երեսաց մերոց։

Արդ՝ այժմ՝ առ ոմն դիմեսցուք ոմն Աստուած մեր. և ում պատմեսցուք զցաւս մեր, եթէ ոչ քեզ բարկացելոյդ. զի որպէս արդարութիւն խրատեցեր և հարեր զմեզ. կարող ես և դու ողորմութեամբդ անդրէն վերսին բժշկել և մխիթարել։

Վասն որոյ՝ ահա անկանիմ առաջի անոխակալեդ Աստուծոյ. և ըստ անառակին գոչեմ, մեղաք յերկինս և առաջի քոյ. մեղաք ստեղծողիդ մերոյ. մեղաք բարերարիդ մերոյ և Աստուծոյ։

Ողջեմ զքեզ անոխակալ Աստուած գարձիր՝ ի բարկութենէդ քումմէ՝ և անցո՛ ի մէնջ զցասումն քո. մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս. վաղվաղեսցէ առ մեզ ողորմութիւն քո. զի աղքատացաք յոյժ։ Օգնեա՛ մեր՝ տէր, զսրթիր. արի՛ և մի՛ մերժեր զմեզ խսպառ։ Մի՛ մոռանար զաղքատութիւն և զնեղութիւնս մեր։ Արի՛ տէր՝ օգնեա՛ մեզ և փրկեա զմեզ վասն անուան քոյ որ կոչեցեալ է՝ ի վերայ մեր։ Մի՛ մատներ զմեզ խսպառ վասն ա-

նուան քոյ. մի ցրեր զուխտս քո. և մի՝ ի բայեայ առներ զողորմութիւնս քո՝ ի մէնջ։ Օ՛ի դու միայն ես փրկիչ մեր և օգնական. դու միայն ես ապաւէն մեր և յոյս։ Օ՛ի բայ՝ ի քէն զայլ ոք ոչ գիտեմք. և զանուն քո կարդամք հանապազ։ Տես զտառապանս ազգիս մերոյ. հաս յօգնութիւն և այց արա։

Նա որդէս գթայիր հնոյ ժողովրդեան վասն աբրահամու, իսահակայ, յակոբայ՝ և վասն դաւթի ծառայից քոց. գթա՛ և այժմ նորոյ ժողովրդեանդ և փոքու հօտիդ, վասն սրբուհւոյ Աստուածածնի, անարատ ծնողի քոյ. և սրբոյն Յովհաննու կարապետին և մկրտչին քոյ. սրբոյն Աստփաննոսի նախնջին վկային քոյ. սրբոց Առաքելոց և Արքարէ՛ցն քոց. և սրբոց Առաքելոցն և յատուկ լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի, և սրբոյն Գրիգորի բազմաչարչար վկային քոյ. և նորին Որդւոց և Թոռանց ընտրելոց ծառայից քոց. և սրբոց Հռիփսիմեանց և Գայիանեաց յաղթող վկայիցն քոց։ Նա բարեխօսութեամբ սրբոց Հայրապետաց և Վարդապետաց. Հզնաւորաց. Արտիրոսաց. Կուսանաց. և ամենից սրբոց քոց հնոց և նորոց՝ յայտից և անյայտից։

Եւ՛ և բարեխօսութեամբ սրբոց քոց երկնաւորացդ՝ Գաբրիէլի և Միքայէլի և ամենից անմարմնական դասուցդ։

Օ՛ի եթէ վասն բազում մեղաց մերոց և անօրէնութեանց, առ ժամանակ մի թողեր զմեզ. դարձուցեր զերեսս քո՝ ի մէնջ և տրտմեցուցեր. վասն

պատուական արեան քոյ՝ և վասն արդարութեան սիրելեաց քոց՝ դարձ առ մեզ. և ողորմութեամբ քով մեծաւ՝ ողորմեաց մեզ. երևեցո զերեսս քո մեզ՝ և ուրախացո զմեզ, որպէս ասացեր առ եաւ։ Լսեցո և մեզ զայն երանաւէտ ձայնն թէ՝ լուսաւորեա՛ եկեղեցիդ հայաստանեայց և ուրախ լեր. զի հասեալ է լոյս քո։ Ա՛հաւասիկ ես դարձուցանեմ՝ ի քեզ զվաղաղութիւն իբրև զգետ. և զմանկունս քո՝ ի հեռաստանէ՝ ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն։ Յիրաւի՝ այդպիսւոյ ամենակարողի Աստուծոյ ողորմութեանն եմք մնացեալ ապաստան՝ ողորմած Աստուած։

Ուրեմն հաշտեաց ընդ մնացորդաց Ժողովրդեան քոյ. փրկեա՛ զմեզ մեծաւ սքանչելեօք. Ժողովեա՛ զմեզ՝ ի գոգ սիրոյդ և մխիթարեա՛. ՝ի փառս անուան քոյ սրբոյ որ կոչեցեալ է՝ ի վերայ մեր։

Ա՛յլ և աղաչեմ զքեզ տէր իմ և Աստուած իմ վասն ամայացելոց և անշքացելոց վանորէից և եկեղեցեաց մերոց։ Լուր մեզ՝ որք ահա նեղեալ անձամբք՝ աղաղակեմք առ քեզ։

Մի՛ յիշեր զմեղս մեր որք բարկացուցաք զքեզ. այլ յիշեա՛ զսուրբսն քո՝ որոց յանուն կառուցան եկեղեցիք մեր։ Զսուրբ՝ և զմաքուր նշխարս նոցա՝ որք ամփոփեալք են՝ ի նոսա. և զսրբութիւն՝ յորոց վերայ անուն քո կոչեցեալ է։

Եւ ո՛չ եթէ վասն արդարութեան իմոյ արկանեմ զայս աղերս առաջի քոյ, այլ՝ վասն բազում գթութեան քոյ, և վասն սիրոյ սիրելեաց սրբոց՝ և սրբութեանց քոց։

Ուրեմն՝ աղաչեմ զքեզ՝ ողորմած Աստուած՝ զԹած Աստուած. վասն անհուն ողորմութիւն քոյ. 'ի սէր սրբոց եկեղեցեաց և սրբութեանց քոց. բարեխօսութեամբ քեզ հաճոյացելոց սրբոցն քոց. և միջնորդութիւն նոցին չարչարանացն՝ պատուական արեանն, և մաքուր նշխարաց և դամբարանացն. ողորմեա՛ և այց արա՛: Որպէս տառապեցուցեր բարկութեամբդ, նմանապէս բժշկեա՛ և մխիթարեա՛ ողորմութեամբդ: Զի որպէս տեսին աչք մեր զանցաւութիւն և զապականութիւն նոցին վասն մեղաց մերոց, տուր մեզ՝ տեսանել վերստին զվերանորոգութիւն և զպայծառութիւն նոցին՝ վասն սիրելեաց սրբոց քոց:

Եւ որպէս հատան և լուծին ձայնք օրհնութեաց և փառաբանութեանցն 'ի նոցանէ, արա՛՝ զի վերստին զօրացին և բարձրացին 'ի փառս անուան քոյ. զի ծանիցեն ամենեքեան թէ՝ կոչեցեալ է անուն քո 'ի վերայ մեր՝ և նոցա: Զորս և մեր տեսանելով՝ վերառաքեսցուք փառս և գոհութիւն 'ի յերկինս քեզ՝ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Շնորհակալութիւն ԱՐՔ՝ վասն յաւուրս քառասարութեան ոչ սա ապէս հայոց: Եւ նոցուն ծոց պարչէաւ, զի նա հաս ողորմեսցի, ի քառասարեսցէ:

Վերակրկնելով զպաղատանս իմ արդէն՝ առ ողորմածդ Աստուած՝ խնդրեմ և վասն մնացորդացն

ազգիս մերոյ։ Ա՛յսինքն՝ վասն վանորէից. և եկեղեցեաց. և վասն եկեղեցականաց և բոլոր ժողովրդեանս մերոյ. զի զորս պահեալ ես մինչև ցայժմ 'ի հաստատութեան և 'ի բարեկարգութիւն, ազաչեմ մեծաւ թախանձանօք, զի և ևս պահեսցես 'ի խրնամս քոյ 'ի վառս անուանդ քում սրբոյ։

Մի հայիր 'ի մեզս իմ և յանարժանութիւնս իմ. այլ հայեաց 'ի քոյ անսպառ սէրդ և յանբաւ մարդասիրութիւնդ։

Այլ զորս խնդրեմ ես ըստ իմոյ սխալկոտ բնութեանս, և ըստ տկար մտացս, զոր կատարեա զնոքիս իմ քոյով ամենազէտ և անսխալ իմաստութեամբդ. որ լաւապէս գիտես զպէտս և զօգուտս մեր՝ քան զոր մեք խնդրեմք և իմանամք։

Այդ՝ յառաջ քան զխնդրուածս իմ, իբր զպէրս տարածեալ առաջի աստուծոյդ իմոյ զգլխաւոր և զմեծամեծ բարերարութիւնդ. զորս արարեալ ես յատկապէս ազգիս հայոց՝ յիշեմ մեծաւ շնորհակալութեամբ։ Օ՛ի եթէ ոչ վասն մերոյ արժանաւորութեանն, գոնէ՝ 'ի նոսա խնայելով, զթասցիս 'ի մեզ, և ևս ողորմեսցիս։

Այդ՝ նախապէս 'ի յիշումն ածեմ առ քեզ՝ ով տէր իմ Յիսուս Քրիստոս. զքոյակերտ և քոյահաստատ Աթոռդ՝ և ըստ հոգւոյ ծնօղն մեր զսուրբն Էջմիածին։ Օ՛որ քոյով իջմամբդ հիմնարկեցեր. ատուածայնով լուսովդ ձևակերպեցեր. և ամենիմաստ ճարտարապետդ կառուցեր և հաստատեցեր։ Օ՛սուրբ Էջմիածին ասեմ՝ զոր իբրև զմի պայծառագոյն արեգական ծագե-

ցեր 'ի դաշնն արարատեան. և որպէս զմի լուսատու և պատուական ակն փայլեցուցեր 'ի քաղաքն վաղարշապատ. զոր իբրև զմի շտեմարան անսպառելի շնորհագդ կազմեցեր 'ի յազգս հայկազեան. և իբրև զմի մշտաբուղխ ազբիւր հոգեպարար պարգևագդ բղխեցուցեր 'ի վիճակս Թորգոմեան: Վասն որոյ՝ ցանկալի և նախանձելի զնա արարեր 'ի յաչս ամենայն ազգաց և աշխարհաց: Իսկ՝ և զայս միակ՝ գերազանցագոյն, և անհամեմատ պարգևս, յատկական սիրով մեզ հայազնեցիս, և քումդ փոքրոհոտիդ շնորհեցեր: Այլ ոչ միայն այս, այլև բազմօք եղանակօք յատկացուցեր զազգս մեր յատուկ սիրով 'ի մէջ ամենայն ազգաց:

Քանզի՝ են թէպէտ իւրաքանչիւր ազգաց և ժողովրդոց Աթոռք և եկեղեցիք, սակայն ոչ են լուսաձև և աստուածակերտ՝ որպէս Աթոռն մեր սրբ Էջմիածին:

Են թէպէտ այլոց ազգաց հաւատացելոց հովուապետք և լուսաւորիչք սուրբք, սակայն ոչ են 'ի հնգետասան ամն 'ի բովս փորձութեան բազմատեսակ չարչարանօք մաքրեալք, պարզեալք և 'ի մաքուն կենդանի մնացեալք, որպէս Լուսաւորիչն մեր սուրբն Գրիգորիոս:

Են թէպէտ այլոց ազգաց դիր և տառ՝ մարմնացուցիչ անմարմնոյ և աստուածայնոյ բանիդ, սակայն՝ ոչ են յատկապէս 'ի քէն շնորհեցեալ և մատամբ քով գծեցեալ որպէս գիրս մեր:

Կոչեցեր թէպէտ զազգս բազումս առ քեզ՝ և հաւատացուցաս քէզ արարեր, սակայն՝ քարոզու-

թեամբ և վարդապետութեամբ սրբազանից առաքելոց և աշակերտացն քոց։ Բայց զազգս հայոց՝ (որովհետև էր յատուկ քեզ սիրելի), ոչ շատացար աշակերտօք և քարոզու թեամբ առ ձեռն բերել. այլ որպէս թէ՝ աշխատեցար անշխատդ և ամենակարողդ Աստուած՝ և հոգացեր այնքան, մինչ զի՝ բռնութեամբ և անօրինակ հրաշիւք առ քեզ կոչեցեր, և քեզ սեփական ժողովուրդ արարեր։

Այլոց ազգաց՝ թագաւորս և մարմնաւոր իշխողս կարգեցեր. մեզ հայոցս ազգի՝ և քումդ վոքեր հօտի՝ դու ինքնդ եղեր թագաւոր՝ տէր և իշխան։ Լանդելով և մեզ թէ՝ իմ և իմոցս թագաւորութի չէ, յայսմ աշխարհի։ Այլ թէ՝ որք քրիստոսանքն են, զմարմնս իւրեանց ի խաչ հանիցեն. ըստ սրբոյն պօղոսի հարազատին քոյ։

Այս որ երբեմն տանջես զմեզ և խրատես ձեռօք պլազգեաց, այն ևս հայրականի և յատկականի սիրոյդ են ցոյց. զի զոր սիրես, խրատես և յանդիմանես։ Որք ամենեքեան են նշանք և քարոզք քումդ յատկականի և գերազանցագունի սիրոյ և գթութեդ՝ զորս ունիս առ խղճալի ազգս հայոց։

Յիրաւի՝ ով տէր իմ, ոչ այսպէս արարեր այլոց ազգաց և ժողովրդոց՝ որպէս արարեր մեզ։

Երդ՝ այսքանեաց բարերարութեանց քոց զլեռխարէնն՝ զոչ այլ ինչ ունիմք հատուցանել քեզ. վասն թէ՝ զլեառս, և զգոհութիւնս շնորհակալութեամբ հանդերձ՝ քեզ անկարօտիդ Աստուծոյ մատուցցուք յաւիտեանս յաւիտենից։

Երդ՝ որ զմեծագոյնսն և զգերազանցագոյնսն ա-

բարեր, զվոքրաղոյնսն և զհեշտականսն մի խնա յեր ի մէնչ ով բարերար և ողորմած Աստուած՝ առ որ ամենայն ինչ կարելիք են և զիւրինք։

Ուրեմն՝ աղաչեմ զքեզ ով բարերար և ողորմած Աստուած. զքոյահաստատ Աթոռն և զմայրն մեր սուրբ Էջմիածին՝ (զոր իբր յատուկ փառք, պարծանք և մխիթարութիւն մեզ հայազնէիցս և լուսաւորչակրօն հօտիս շնորհեցեր), հաստատուն և անշարժ պահեա զնա ի վերոյ անխախտելի վիմիդ՝ ըստ անսուտ խոստմանդ քոյ։

Անդադարեալ արա ի նմանէ զմշտաղեղ և զհոգեպարար շնորհս հոգւոյդ սրբոյ մինչև ի կատարած աշխարհիս՝ ի միխիթարութիւն և ի զուարճութիւն մեզ՝ և եկեղեցեացս մերոց։

Օ՜նա՝ զոր հաստատեցեր ի մեզ, զօրացո և սրբեցո՛ զամենայն ծագս երկրի՝ ի փառս անուանդ քում սրբոյ։

Օ՜սուրբ Տեղին ոտից քոց միշտ փառաւորեա՛ յաչս ամենայնի ըստ ճշմարիտ խոստմանդ քոյ։

Փշրեա՛ ամենակարող զօրութեամբդ և խորտակեա՛ որք հարցին ընդ վէմն այն. և կուրացո՛ զաչս այնոցիկ որք նենգութեամբ հային ի նա։

Օ՜արդարոն և պերճ պահեա՛ զնա միշտ քոյընտիր Հայրապետօք. շնորհավայել Եպիսկոպոսօք և Վարդապետօք՝ և ամենայն մանկամբք։

Լե՛ր օգնական և ձեռնտու ներկայացելոյ Հայրապետին մերոյ (այս անուն) Կաթուղիկոսին՝ յամենայնում ժամու՝ ի յամենայն քոյահաճոյ գործս և յընթացս նորին։ Պահեա՛ զնա խաղաղութեամբ

և երկար ամօք՝ 'ի պայծառութիւն քումդ սրբոյ տան, և 'ի մխիթարութիւն ծառայից քոց։

Եւ ընդ սրբոյ Աթոռոյն մերոյ՝ պահեա և զայլ ամենայն Վանորայս և զԵկեղեցիս մեր. հանդերձ Առաջնորդօք Վարդապետօք, Քահանայիւք, Իշխանօք, Ժողովրդովք, և ամենայն մանկամբք նոցին՝ 'ի շինութեան, 'ի բարեկարգութիւն, և 'ի խաղաղութեան. ազատ և անարատ յամենից օտար և 'ի թիւր աղանդոց։

Զքո ամենայաղթ զօրութիւնդ. զանպարտելի նշան սուրբ խաչիդ. զբանակս երկնային զինուորութեանդդ, և զդասս ամենից սրբոց քոց՝ կացո պահապան եկեղեցեացս մերոց և սոցին մանկանց՝ զտիւն ողջոյն և զգիշերն ողջոյն. և փրկեա յամենից հոգևոր և մարմնաւոր թշնամեաց և փորձութեանց. զի փառաւորեսցի 'ի նոսա անուն քո յաւիտեան։

Տէր Աստուած մեր, տուր հոգևոր Հովուաց մերոց և Առաջնորդաց՝ զքոյաշունչ իմաստութիւդ՝ զքոյապատուէր հեզութիւն և զլսոնարհութիւնն. որպէս զի՝ ըստ կամաց քոց հովուելով զհօտս քո, 'ի յերևիլ հովուապետիդ, կարիցեն ասել համարձակութեամբ՝ ահա ես և մանկունք իմ. և ընդունիլ 'ի քէն զվառացն սլսակ։

Սպառազինեա զնոսա զօրութեամբ և արիութիւբ՝ զի կարիցեն ընդդէմ կալ ոչխարամորթ գայլոց և ապականչաց եկեղեցեաց և կրօնից մերոց։

Տուր քահանայից մերոց զդաստութիւն և մաքրութիւն։ Որպէս զի՝ կարիցեն արժանապէս ծա-

ռայել քումդ սրբոյ խորհրդոյ. և լինիլ հմար-
ձակ միջնորդ ասուծոյդ և ժողովրդեան՝ զաղօթս
նոցա քեզ մատուցանելով և զողորմութիւնս քո
առ նոսա իջուցանելով, որք և ըստ հաճոյից քոց
շահելով զտուեալ մնասն քո, առցեն 'ի քէն ըզ-
բաղմապատիկն:

Տուր տէր սարկաւագաց, դպրաց և ամենից ման-
կանց եկեղեցեաց մերոց՝ զպարկեշտութիւն և զու-
սումնասիրութիւն: Որպէս զի՝ իւրաքանչիւրքն յոր
կոչումն կոչեցեալ են, 'ի նմին կացցեն առանց ա-
բատոյ. արժանապէս ծառայեսցեն եկեղեցւոյ քումմ
սրբոյ. և կոչիցին 'ի քէն ծառայ բարի, աղնիւ և
հաւատարիմ:

Ընկալ տէր զաշխատանս աշխատաւորաց, և
զնուէրս տուողաց եկեղեցւոյ քումմ սրբոյ 'ի փառս
և 'ի հաճոյս քոյ. և տուր նոցա փոխարէն զբազ-
մապատիկս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ և արա ար-
ժանի այնմ երանութեանն՝ զոր ողորմածքն ժա-
ռանգեն:

Տուր տէր՝ իշխանաց և գլխաւորացն ժողովր-
դեանս մերոյ՝ զբարեպաշտութիւն և զսերտ հա-
ւատս՝ առ քեզ: Օգտէր և զմիաբանութիւն՝ առ
միմեանս. և զգութ և զինամածութիւն՝ առ տղ-
քատս և փորձանաւորս: Քաղցրացո և սիրեցո ըզ-
նոսա յաչս ամենայն իշխողաց և բռնաւորաց որ-
պէս զի լինիցին՝ պարծանք և ուրախութիւն եկե-
ղեցւոյդ քոյ, ձեռնտու և մխիթարութիւն հասա-
րակութեանն, և հաճոյական ծառայք քեզ. և տա-
ցեն 'ի քէն զվարձս ընդ ամենայն սուրբս քո:

Յիշեա՛ տէր զբոլոր ազգս մեր՝ զփոքրիկ հօտս քո զամենեսեան, ուր և իցեն. զմեծս և զփոքունս. զարս և զկանայս. և այլ արա ամենեցունց վասն մեծի ողորմութեան քոյ։ Նո՛ւր ամենեցունց կեալ սիրով և խաղաղութեամբ. լուսաւորչաւանդ հաւատով և առաքինական գործով. ապահով կենաց և բարուոք կենցաղավարութեամբ։ Լե՛ր ամենեցունց ձեռնտու և օգնական յամենայն ժամանակի. ի ննջել և ի յառնել. ի տան և ի ճանապարհի. ի ծովու և ի ցամաքի. ի յառս և ի տուրս. ի վարս և ի վաստակս։ Եւ զամենայն օգտարար և անմեղաձին գործս նոցա յաջողեա՛ և ի բարին ե՛զ երեցո՛։

Այլև՝ դհիւանդացեալսն և զցաւագնեալսն ա՛ռողջացո՛։ Օ՛տարմեալսն և զվշտացեալսն սիրեա՛ և ուրախացո՛։ Օ՛բանտարկեալսն և զգերեալսն ազատե՛։ Օ՛փորձանաւորսն փրկեա՛։ Պակասաւորացն լից զպակասութիւնսն հոգեկանօք և մարմնականաւ։ Ամենայն անձարից և անօգնականաց հաս յօգնութիւն և այլ արա։ Օ՛անարձանս և ըզյամառեալսն ի մեզ, դարձո՛ ի քար ճանապարհաց իւրեանց։ Եւ ամենեցունց ողորմեա՛ ըստ մեծի ողորմութեան քում, և ոչ հեա՛ ի խաղաղութեան։ Որպէս զի՝ ամենեցունց ողորմելով՝ յամենեցունց փառաւորեսցիս միշտ։

Այլև խնդրեմ ՝ի քէ՛ քէն տէր իմ և Աստուած իմ. զի տացես ամենայն աշխարհայ զխաղաղութիւն. թագաւորաց հաշտութիւն. ստորագրելոց սէր և հնազանդութիւն. քաղաքաց, գաւառաց և

գիւղորէից շինութիւն և ապահովութիւն. այգեաց և անդաստանաց պտղաբերութիւն և ամենայն բարեաց լիութիւն և առատութիւն:

Այլև բարձցես քոյով ողորմութեամբդ յամենայն աշխարհաց և ազգաց, և մանաւանդ՝ յերկրէս և յազգէս հայոց, զամենայն ցասումն և զայլ ազգի ազգի ձախորդութիւս. զհիւանդութիւն և ըզպէսպէս ցաւս. զսով, զսուր և զմահտարաժամս. և զայլս ամենայն վշտաբեր և զվնասատու պատահմունս. որք յամենազօր հրամանէդ շարժեալք՝ գան ի վերայ մեր վասն մեղաց մերոց: Որպէս զի յամենայնի և յամենեսեան անուն քո փառաւորեսցի յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթք առ աստուածածին Մարիամ:

Յետ այսքան վշտագնեալ անձամբ՝ բաղխելոյ զդուռն ողորմութեան Աստուծոյ մերոյ և միածնի որդւոյ քոյ Յիսուսի Քրիստոսի, այժմ լալագին դիմօք առ քեզ դիմեմ՝ զմաքուր ոտիւք քովք փարիմ և բաղխեմ զդուռն մօրդ ողորմութեան՝ ով ամենօրհնեալ սուրբ Աստուածածին Մարիամ: Եւ զոր ինչ ի յորդւոյ քումմէ խնդրեցի, խնդրեմ և ի քէն. և զորս յուսացայ գտանել ի նմանէ, յուսամ և ի քէն գտանել:

Քանզի՝ դու հարսն եղեր Աստուծոյ Հօրն ամենակալի՝ որ յամենայնի կարող է և բաւական:

Մայր եղեր Որդւոյն Աստուծոյ, որ յամենայնի ողորմած է և մարդասէր։

Ընակարան եղեր Հոգւոյն Աստուծոյ՝ որ յամենայնի հարուստ է և առատ։

Միանգամայն շտեմարան և գանձարան եղեր ամենասրբոյ Երրորդութեանն՝ որ աղբիւր է ամենայն բարութեանց և լցուցիչ երկնաւորաց և երկրաւորաց։

Երդ՝ ով սուրբ Աստուածածին Մարիամ։ Հայրըն Աստուած որ այնքան սիրեաց զքեզ, մինչ զի՝ զմիակ միածին որդին իւր՝ որով արար զամենայն արարածս, քեզ շնորհեաց և որդի քո արար. այլ զի՞նչ իցէ խնայելոց 'ի քէն։ Որդին Աստուած՝ որ այնքան սիրեաց զքեզ, մինչ զի՝ բնակեցաւ յարգանտի քում, բազմեցաւ 'ի գիրկս քոյ. և որ կերակրիչն էր ամենայնի, կերակրեցաւ 'ի յբստեանց քոց. և որ Աստուած և տէր էր քո, եղև որդի քո՝ և կոչեաց զքեզ մայր. այլ զի՞նչ խնդրիցես 'ի նմանէ զոր խնայիցէ 'ի քէն։ Եւ Հոգին Աստուած՝ որ այնքան սիրեաց զքեզ, մինչ զի՝ զէակիցն իւր քեզ հաւատաց. և ինքն որ զարդարիչն է ամենայնի՝ հանգեաւ 'ի քեզ, և արար զքեզ օթարան անսպառելի շնորհացն իւրոց. այլ զի՞նչ մնասցէ պակաս զոր ոչ ունիցիս դու։

Քանզի հաւատամ ճշմարտիւ. զի ըստ բանի հրեշտակին, տէրն և ամենայն շնորհաց տուօղն ընդ քեզ է՝ և որդի քո. և 'ի գիրկդ քո ունիս։ Եւ զոր որդիդ քո ունի, քո է. և զոր ինչ խնդրիցես 'ի դմանէ, ոչ խնայէ. և դու ում կամիցիս,

կարող ես տալ։ Որպէս և որդիդ քո ասէ բերանով սողոմոնի թէ՝ խնդրեա՝ մայր իմ. զի զոր ինչ և խնդրիցես, ոչ դարձուցից զերեսս իմ։

Ուրեմն՝ ով սուրբ Աստուածածին Մարիամ. զկնի Աստուծոյ՝ դու ես ակնկալութիւն արարածոց նորին։ Դու ես ուրախութիւն տրամեցելոց. փրկիչ փորձանաւորաց, օգնական և մխիթարութի հաւատացելոց. և յոյս և ապաւէն մեղաւորաց։

Աչքս մօք՝ և սիրելի որդին քո՝ ի խաչին՝ իբրև զկտակ աւանդեաց քեզ զհաւատացեալս իւր՝ ի ձեռն յօհաննու. ասելով թէ՝ կին դու՝ ահա որդի քո։ Իբր թէ՝ հաւատացեալքս իմ, քո են. և քեզ են յանձին այսուհետև։ Նոյնպէս՝ և անուամբն յօհաննու՝ մեզ հաւատացելոցս ասաց թէ՝ ահա մայր ձեր. զոր ինչ և կամիցիք, ի դմանէ խնդրեցէք այսուհետև։

Արդ՝ ով մայր ողորմութեան սուրբ Աստուածածին Մարիամ. և ես մի եմ՝ ի հաւատացելոցն սիրեցելոյ որդւոյ քոյ։ Որ գոլով ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ողորմելի՝ և յամենայնի պակասաւոր, կարօտիմ քումդ մայրական գթութեան։ Նեղեալ և վշտացեալ՝ ի հոգւոր և՝ ի մարմնաւոր թշնամեաց, կարօտ քումդ օգնականութեան։ Մեղաւոր և յամենայնի յանցաւոր, կարօտ քումդ ձեռնտուութեան և յուսադրութեան։

Վասն որոյ՝ անկանիմ առաջի քո՝ ով սուրբ Աստուածածին և աղաչեմ զքեզ։ Ուրախացո զտառապեալ ծառայս քո և մխիթարեա։ Լից զպակասութիւնս հոգւոյ և մարմնոյ իմոյ՝ քոյով ան-

նուազելի շնորհօքդ։ Փրկեա զիս 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր թշնամեաց և յամենից փորձութեանց՝ քոյով անկարանալի զօրութեամբդ։

Սրբեա և մաքրեա զիս յամենից մեղաց իմոց՝ քոյով սուրբ և անարատ կուսութեամբդ։

Նու լե՛ր միջնորդ և բարեխօս առ միածին որդին քո վասն իմ մեղաւոր ծառայիս. զի ընկալցի զաղաչանս իմ, զոր մատուցի նմա. և կատարեսցէ զխնդրուածս իմ։ Ներեսցէ սխալանացս՝ և թողութիւն շնորհեսցէ ամենայն մեղաց իմոց. ընկալցի զիս վերսին 'ի սէր և 'ի խնամս իւր. և պահեսցէ զիս ըստ հաճոյից կամաց իւրոց, որ քան 'ի մարմնի եմ։ Նու յետ աստեացս՝ արժանացուսցէ իւրոյ օրհնեալ տեսութեանն։

Քանզի՝ հաւատամ անկարծիք՝ ով Տայր ողորմութեան զի եթէ անգամ մի ակն ածիցես վասն իմ առ որդիդ քո սիրելի ուրախութի է ինձ լիովին՝ և յամենայնի ապահովութիւն։ Եթէ անգամ մի՝ զմաքուր ստինդ ցուցցես նմա, բաւական փրկութիւն է ինձ՝ և յամենայնի ազատութիւն։ Նու եթէ զշեթ մի 'ի սուրբ արտասուացդ՝ (զոր հեղեր 'ի ժամ խաչելութեան նորա), 'ի յիշումն ածիցես նմա, թողութիւն է ամենայն մեղաց իմոց՝ և բոլորովին կեանք յաւիտենական։ Որք քեզ առատագթոյ մորդ ողորմութեան՝ ամենայնիւ դիւրինք և կարելիք են և ինձ ողորմելոյ ծառայիս քոյ՝ ամենայնիւ պիտանիք և հարկաւորք։ Նու իմ գտեալ զողորմութիւն 'ի քէն, փառաւորեցից զՈրդիդ քո միածին՝ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն. և

զՄայրդ ողորմութեան գոհութեամբ բարեբանեցից. յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք ի հառաջանս ամ երջանիկ ոչոնց, ի ամ յաղո-ի շնաւորիչն ի երկնաւորսն ազգին հայոց։

Յետ այսքան հառաջանաց և աղաղակաց, աղօթից և պաղատանաց՝ զորս մատուցի ամենագթածի և ողորմածի Աստուծոյն իմոյ՝ վասն իմոյ մեղուցելոյ անձինս, և վասն խղճալոյ ազգիս իմոյ. այժմ մեծակական ոգւով և լալագին աչօք առ ձեզ դիմեմ, և զգրունս սիրոյ և գթութեան ձերոյ բաղխեմ. ով երջանիկ սուրբդ Աստուծոյ՝ և յատուկ բարեկամքդ մեր։ Ո՛վ սիրելիքդ Քրիստոսի՝ և ճշմարիտ բարեբարքդ մեր։ Ո՛վ հաճոյական ծառայքդ Աստուծոյ, և սրտացաւ տեարքդ մեր։ Ո՛վ համարձակ և հաւատարիմ խորհրդակիցքդ Քրիստոսի, և բազմերախտ հարք մեր և գթառատ ծնողք։ Ո՛վ ընտանիք, նախաձանութք, դաստիարակք և լուսաւորիչք ազգիս մերոյ։

Ա՛ռ ձեզ է հառաջանքս ով սրբազան Առաքեալք Քրիստոսի՝ սուրբք Բարդուղիմէոս և Թադէոս. սուրբ Գրիգորիոս Լուսաւորիչ, սուրբք և սրբազինք Ուղիք, Թոռունք և Հաւատիքք Սրբոյ Լուսաւորչին մերոյ. Արիստակէս. Վրդանէս.

Յուսիկ. Դրիգորիս և Դանիել: Սուրբդ Ներսէս. Իսահակ. Մեսրոպ և Յակոբ Հայրապետք: Սրբ և անարատ հարսունք Քրիստոսի՝ Հոխիսմեանք և Գայիանեանք: Սրբ Թադաւորք մեր Աբգարիոս և Տրդատիոս: Սրբ Ոսկեանք, Սուքիասեանք և Վարդանեանք: Որք յերկրէս և յաղգէս մերմէ, և որք յերկրոջս մերում կատարեցայք:

Քանզի՝ դուք որպէս զմովսէս և զյեսու՝ ազատեցիք զմեզ յանմարմին վարաւօնէ և յեգիպտական գործոց նորին:

Դուք բերիք առ մեզ 'ի վերուստ զսպասգամս Աստուածային կտակարանացն:

Դուք լուսաւորեցիք զմեզ հաւատով և Աստուածպաշտութեամբ:

Դուք զմեզ արարիք աստուածածանօթս. և քացիք զբերանս մեր կարդալ առ Աստուած:

Դուք վասն մերոյ ազգիս փրկութեանն կրեցիք զսյնքան սարսռելի չարչարանսն. և հեղիք զպատուական և զսուրբ արիւնս ձեր. և ընծայեցայք արժանի պատարագ Աստուծոյ. և հաշտեցուցիք զնա ընդ մեզ:

Դուք ներկեցիք վարդագոյն արեամբ ձերով ըզհողս և զբարինս երկրիս մերոյ՝ և ետուք զնոսա մեզ 'ի բժշկութիւն հոգւոց և մարմնոց մերոց:

Յերկրոջս մերում կան ամփոփեալք սրբ՝ հրաշագործ, և կենդանի նշխարք և մարմինք ձեր: Յորոց վերայ և յանուն ձեր կանգնեցան հրաշալի և աստուածազարդ տաճարք և եկեղեցիք: Յորոց ելանէին և ելանեն ազգի ազգի շնորհք և զօ-

բութիւնք։ Յորս հաւատով դիմեալքն առնուին և առնուն զպէսպէս բժշկութիւն և պարգևս հոգւոց և մարմնոց։ Օ՛նորս իբրու յատուկ պարծանք, և տեղի ապաւինութեան Աստուած ազգիս հայոց։

Աղդ՝ ով բազմերախտ հարք մեր և լուսաւորիչք հոգւոց և մարմնոց մերոց։ Օ՛արթիք, և տեսէք զեղծութիւն վանորէից և եկեղեցեացն՝ որք յանուն ձեր են կառուցեալք, հայեցարուք 'ի տառապանս նոցա՝ զորս կրեն 'ի պէսպէս թշնամեաց։ Յորոց և բազումք ըստ մեծի մասին կան ամայիք և անշքացեալք։ Յորս եղեալ բազմահրաշ դամբարանք ձեր՝ անպատուեցեալք և անարգեցեալք. և ազգ մեր, անտիրացեալ և անօգնական յուստեքէ, մատնեալ 'ի ձեռս տեղանց խստարտաց։

Աղդ՝ առ ո՞վ դիմեսցուք. ո՞ւմ պատմեսցուք զվիշտս և զտառապանս մեր. և կամ զնի՞վ արկցուք միջնորդ և բարեխօս առ Աստուած վասն մեր՝ եթէ ո՞չ զյատուկ բարեկամդ և զծանօթդ մեր. զհաճոյական ծառայդ և զսիրելիդ Աստուծոյ։

Ինչպէ՞ մինչ բարկանայր Աստուած հնոյ ժողովրդեանն, նոքա զԱբրահամ. զՄովսէս, զԴաւիթ, և զայլս նախնիս իւրեանց՝ յիշեին և միջնորդ արկանէին առ Աստուած. որպէս յայտ է 'ի յերիս մանկունսն, և յայլս բազումս։ Եւ Աստուած ևս՝ վասն սիրոյ և միջնորդութեան նախնեացն նոցին, դառնայր 'ի բարկութենէն և ներէր ժողովրդեանն։ Որպէս և դաւիթ վկայէ թէ՝ ասաց Աստուած սատակել զնոսա, եթէ ո՞չ Մովսէս ընտ-

բեալն կայր առաջի նորա։ Օ՛ի դարձաւ առ տէր՝ և անցոյց զբարկութիւն նորա. ասելով՝ եթէ թողուս զմեզս ժողովրդեան քոյ՝ թող, ապա թէ ոչ, և զիս ջնջեա՛ ի գրքութեդ։ Եւ ինքն Աստուած ասէ՝ ասէ բազմիցս առ ժողովուրդսն թէ՝ վասն աբրահամու սիրելւոյն իմոյ. և վասն մովսէսի և դաւիթ ծառայիցն իմոյ՝ ողորմեցայց ձեզ։

Արդ՝ ո՛վ սուրբք Աստուծոյ. ազգիս մերոյ ևս դուք էք աբրահամ, մովսէս՝ և դաւիթ. զի զձեզ կացոյց Աստուած՝ իշխան, առաջնորդ, վերակացու և հովիւ՝ այսմ փոքրու հօտի։ Վասն որոյ՝ դուք պարտիք հոգալ զմէնջ. միջնորդել՝ և աղօթել վասն մեր առ Աստուած. որպէս նոքա առնէին վասն իւրեանց ժողովրդեանն։

Քանզի՝ ի կեանս այս՝ որք այնքան տքնեցայք վասն մեր, ո՛վ երանելիք. քարոզելով. պահելով. աղօթելով. զպէսպէս նեղութիւն և զանազան չարչարանս կրելով մինչ զի՝ և զարիւնս ձեր հեղէք վասն մեր։ Այժմ՝ որք զերծեալք ի տառապանաց աշխարհիս, կայք փառաւորեալք ի յերկինս. և ունիք համարձակութիւն առ Աստուած. ևս առաւել պարտիք հոգալ զմէնջ և օգնել. և միջնորդ և բարեխօս լինիլ առ Աստուած և շարժել զնա ի սէր և ի քաղցրութիւն առ մեզ։

Ուրեմն՝ արկանեմ առաթուր ոտից ձերոց ըղթաղձեալ անձն իմ. անարժան բերանովս համբուրեմ զսուրբ և զշնորհատու նշխարս ձեր. լիզեմ զկող հրաշագործ և խնդրակաւոր դամբարանաց ձերոց. և արտասուաթոր աչօք հայցեմ ի ձէնջ,

ով սիրելիք Քրիստոսի, յաւուրս ծանօթք և բարեկամք մեր։ Ո՛վ բազմերախտ հարք մեր և գթաշատ ծնողք. աղաչեմ զձեզ. հայեցարուք ի խըղճութիւնս և ի տառապանս մեր. և վանորէից և եկեղեցեաց մերոց. ողորմեցարուք և օգնեցէք մեզ։

Եթէ ի մեզ ոչ խնայէք վասն մեղաց մերոց. զոնէ՝ ի պատուական նշխարս և ի սուրբ դամբարանս ձեր խնայեցէք, որք կոխատին և ծաղին ի թշնամեաց և յանարգոց։

Եթէ վասն մերոց անօրէնութեանց՝ բարձի թողի էք արարեալ զմեզ, զոնէ՝ զկոչելի և զսարսռելի չարչարանսդ ձեր, զորս վասն մեր կրեցիք. և զպատուական արիւնս ձեր, զորս վասն մեր հեղէք մատեցէք, յիշեցէք, և ողորմեցարուք մեզ։

Յիշեա՛ և դու մանաւանդ՝ ով յատկապէս հայր մեր բազմերախտ, ծնող մեր գթառատ, և լուսաւորիչդ հոգւոց և մարմնոց մերոց սուրբդ Գրիգորիոս։ Օ՜ քո երկամեայ անտանելի և անօրինակ չարչարանսդ. զերեքտասանամեայ անմբերելի տառապանսդ՝ որ ի վերապին ի մէջ թունաւորացն. զանհանգիստ տքնութիւնսդ՝ և զանդադար հսկմունսդ ի կեանս քոյ վասն մերոյ փրկութեան։

Ա՛ռ ընդ քեզ և զսրբազան Ա՛ռաքեալսն և Լուսաւորիչն մեր, յորոց և դու շառաւիղեցար։ Օ՜ սուրբ և զմաքուր Օրիորդսն Քրիստոսի, որ ընդ քեզ հանդիսակիցք և պսակակից եղեն, մեզ աւետատուք և լուսաբերք։ Օ՜ սուրբ և զբարեբողոջ Ուրդիս և զԹոռուռնն քո, որք ի յաստուածատունկ որթոյդ ընձիւղեալք՝ մշակեցին զայգիս

քո բանաւոր. և ոռոգեցին կենդանարար ջրով հոգւոյն սրբոյ։ Օ՚սուրբ Թագաւորսն և զսուրբ Օ՚օրալարսն մեր՝ որք քեզ հետևելով՝ վասն 'ի քէն քարոզեցեալ հաւատոյն սպառազինեցան ընդդէմ հոգւոր և մարմնաւոր թշնամեաց, և վասն քոյոյ ժողովրդեանդ հանդիսացան և նահատակեցան։

Որք ամենեքեանքդ միաբանեալք՝ մատերուք առ Աստուած. մշտանուէր և անդադրելի աղօթիւք ձերովք միջնորդ և բարեխօս լերուք առ նա. և խնդրեցէք, զի ողորմեսցի մեզ և այց արասցէ. վերանորոգեսցէ զհնութիւն ազգիս և եկեղեցեաց մերոց. ժողովեսցէ զցան և զցիր եղեալ հօտս իւր 'ի գոգ խնամոց իւրոց, և 'ի ծոց սրբոց եկեղեցեաց մերոց։ Ինքն հովուեսցէ և պահպանեսցէ զմեզ յամենից հոգեկան և մարմնական թշնամեաց. և վերակացու լեցի իւրով ամենազօր զօրութեամբն։ Այս մանաւանդ՝ ինձ յատուկ ծառայիս ձերոյ (այս ա-ռաջնորդ) օգնական լերուք, և փրկեցէք յամենից փորձութեց, և մանաւանդ՝ 'ի ներկայականացս։ Այս խնդրեցէք Աստուծոյ, զի թողութիւն շնորհեսցէ բազմատեսակ մեղաց իմոց. և պահեսցէ զնս ըստ հաճոյից կամաց իւրոց՝ որքան եմ 'ի մարմնի։ Այս յետ աստեացս, իւրոյ օրհնեալ տեսութեանն արժանացուսցէ ձերով միջնորդութեամբն։ Օ՚ի և ես ընդ ձեզ փառաւորեցից զհայր և զորդի և զսուրբ հոգին՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԼՈՒՍԻՆ ԱՌ ՍԵՂԱՆԻՆ ԱՍՈՒԵԼՔՆ ԼԱՊՍՈՒԾՈՅ։

Ո՛վ ամենայն Սուրբք Աստուծոյ, հաճոյական ծառայք և հարազատ կամարարք նորին։ Անարատ տաճարք, մաքուր բնակարանք՝ և ամենազուարճ հանգիստք ամենասրբոյ Հոգւոյն։ Ի մարմնի անմարմնացեալք, և ի յերկրի հրեշտակացեալք։ Օնեալք ի տոհմէս աղամայ, ի յերկինս կենցաղավարեալք՝ և ընդ հրեշտակսն դասակցեալք։ Ի յերկրի հալածեալք՝ նեղեալք և չարչարեալք՝ և ի յերկինս փառաւորեալք՝ պսակեալք՝ և ընդ Քրիստոսի թագաւորեալք։ Պարծանք հաւատացելոց՝ և ուրախութիւնք հրեշտակաց։ Լուսաւորիչք աշխարհի՝ և զարդք վերին դասաւոր։ Աղաւէնք և օգնականք երկրաւորացս, զինուորակիցք և պարակիցք երկնային զօրացն։ Յոյս և ակնկալութիւնք մեղաւորաց՝ և համարձակ բարեխօսք առ Աստուած։ Եւ Յովհաննէս մկրտիչ. սուրբ Ստեփաննոս նախավկայ. սուրբ Առաքեալք և Մարգարէք. սուրբ Հայրապետք և Վարդապետք. սուրբ Մարտիրոսք և Դգնաւորք. սուրբ Կուսանք և Միանձունք, և ամենայն Սուրբք հինք և նորք. որ յայտնիք և որք անյայտք։

Աղաչեմ զձեզ. վասն սիրոյն Քրիստոսի զոր ունիք առ նա. վասն սիրոյ և ազգակցութեան ձերոյ զոր ունիք առ մեզ. վասն սոսկալի չարչարանաց ձերոց զորս կրեցիք. և վասն պատուական արեան ձերոյ զոր հեղիք վասն անուանն Քրիստոսի՝ և վասն մերոյ փրկութեան. վասն երախտեաց և

բարերարութեանց ձերոց զոր ունեցայք և ունիք առ մեզ. ողորմեցարուք տառապեալ ծառայս ձերոյ. և հասէք յօգնութիւն տկարութեանս իմում:

Քանզի՝ դուք զփորձն առեալ էք, և գիտէք իսկ. զի բնութիւն մեր սխալական է և դիւրասահ. մարմին մեր դիւրապարելի է և մեղասէր և անյագ ցանկացող յամենայն վնասակարս հոգւոյ: Աշխարհս է յամենայնի որոգայթաւոր՝ լի սոսկասիլ և թունաւորեալ վաղաքշանօք. ունօղ բազմատեսակ պատրանաց և խաբէութեանց՝ և տաճ ամենակերպ փորձութեանց. և թշնամին միշտ առ ընթեր՝ դրդօղ և յորդորօղ:

Արդ՝ ով երանեալք և փառաւորեալք. դուք զայս ամենայն տեսիք և զփորձն առիք. բայց շնորհօքն Աստուծոյ զօրացեալք՝ առ ոան հարիք զամենեսեան, և յաղթեցիք քաջութեամբ. և փշրելով զորոգայթս սոցին՝ ապրեցայք և թռեայք յերկինս՝ և առիք զհանգիստն յաւիտենից: Ուրեմն՝ որք զփորձն առիք, կարող էք և մեզ փորձանաւորացս օգնական լինիլ:

Վասն որոյ՝ աղաչեմ զձեզ ով Սուրբքդ Աստուծոյ՝ օգնեցէք ինձ փորձանաւոր և մեղաւոր ծառայս ձերոյ. փրկեցէք զիս յամենայն որոգայթից և ի փորձութեանց. ի հոգևոր և ի մարմնաւոր թշնամեաց. և պահեցէք զիս յամենից մեղսաբեր պատահմանց և ի բնաւից հոգեվնաս ընթացից: Այլ բարեխօսեցէք առ Աստուած՝ զի ներեսցէ ամենից սխալանաց իմոց. և թողցէ զամենայն մեղս իմ. և պահեսցէ զիս ըստ հաճոյից կամաց իւրոց,

որքան 'ի մարմնի եմ։ Եւ յետ աստի կենացս, արժանացուսցէ իւրոյ քաղցր և օրհնեալ տեսութեանն։ Օ՛ի ընդ ձեզ և ես փառաւորեցից զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին յաւիտեանս յա՛։

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԵՐԿՆԱՅԻՆ ԶԼՈՒՍՈՒՄԲԵՆՈՅ։

Երդ՝ առ ձեզ է աղաչանքս, ով երկնայինք և անմարմինք, հրեղէնք և հոգեղէնք, արփիափայլք և լուսատեսիլք. միաք մաքուրք և անարատք. սուրբք՝ սրբաբանողք Աստուծոյ, և անդադար փառաբանիչք ամենասրբոյ Երրորդութեանն։ Որք կայք միշտ առաջի Աթոռոյ փառաց նորա. և սպասաւորք էք անվրիպելի հրամանի նորին։ Որք էք վերակացուք և պահապանք աշխարհի, և անդադար միջնորդք և բարեխօսք վասն մարդկան։ Որք և ունիք 'ի Յաստուծոյ կարգեալ ձեզ զյատուկ պաղատանս առ նա վասն մեղաւորաց ասելով թէ՝ ողորմեա՛ դու ստեղծեր, մի կորուսաներ. և զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Երդ՝ ով երջանիկք և փառաւորեալք, Աթոռք Քերուբէք, Սերաֆէք, Տերութիւնք, Օրութիւնք, Իշխանութիւնք, Պետութիւնք, Հրեշտակապետք և Հրեշտակք։ Եւ յատուկ պահապան և վերակացու Հրեշտակ իմոյ անարժան ծառայիս։

Այժմ զձեզ աղաչեմ խոնարհեալ անձամբ և պատկառեալ դիմօք՝ Վերակացու և պահապան լերուք մեղաւոր ծառայիս. և օգնեցէք ինձ յամենայն ժամու։

Փրկեցէք զիս ՝ի հոգևոր և ՝ի մարմնաւոր թըշնամեաց, և յամենից վտանգից և ՝ի փորձութեան։ Այս մանաւանդ՝ ՝ի ներկայական փորձութեանցս. (էՀԷ ՈՒՆ)։

Օ՜ աղօթս և գալաղատանս մեղաւորիս մատուցէք առ Աստուած, որպէս է սովորութիւն ձեր. և բարեխօսեցէք վասն իմ առ նա, ասելով՝ ողորմեա, դու ստեղծեր մի կորուսաներ։ Որպէս զի՝ ձերովք խնդրուածովք ներեսցէ սխալանաց իմոց. ջնջեսցէ զձեռագիր յանցանաց իմոց. և գրեսցէ զիս ՝ի դրպրութիւն կենաց։ Այս յետ աստեցս, ձերով միջնորդութեամբն կացուսցէ զիս յաջակողմն դասուն. և կոչեսցէ յիւր յաւիտենական յարքայութիւնն։ Օ՜վ ընդ ձեզ փառաւորեցից զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին. յաւիտեանս յաւիտ՝։

ԱՂՕԹԼՔ ՍՈՒ ՍՈՒ-ՅԷ ԽՍՆ ՓՐԿՀԱԿՈՒ։

Ամենաւ երկիւղիս, սոսկացեալ անձամբ և ծըշմարիտ հաւատով. այժմ խոնարհեալ, երկիրպագանեմ սրբոյ և ամենազօրի Խաչիդ, և անպարտելի Նշանիդ Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և ՝ի քէն հայցեմ զոգնութիւն տառապելոյ ծառայիս քէն՝ որ ես ամենայն բարութեանց ունող. ամենաբաւական, և յամենայնի կարող։

Քանզի դու՝ ով երկրպագելի և ամենասուրբ Խաչ։ Աթոռ ես այնմ ամենահարուստ և ամենողորմ թագաւորին, որ ՝ի յերկինս յաթոռս լուսեղէնս բազմեալ՝ թէպէտ միշտ բաշխէր և բաշ-

խէ առատապէս ամենայն արարածոց իւրոց զբարիս՝ և լցուցանէ զամենեսեան ըստ իւրաքանչիւր պիտոյից. սակայն՝ յորժամ 'ի քեզ բազմեցաւ յաւուր փեսայութեան, և յաւուր ուրախութեան սրտի իւրոյ, այնքան հաճեցաւ և հաւանեցաւ 'ի քեզ և զուարճացաւ, մինչ զի ասաց թէ՝ այս է հանդիստ իմ. յաւիտեանս յաւիտենից 'ի սմա բնակեցայց. զի հաճեցայ ընդ սա։

Այլ յառաւել յուրախութենէն, ոչ շատացաւ այնոքիւք հասարակական բարեօքն զորս միշտ հեղոյր յարարածս իւր. այլ բացեալ զգրունս աստուածային դանձարանի մարմնոյ իւրոյ, այսինքն՝ ձեռացն, ոտիցն և կողիցն, բղխեցոյց յիւրաքանչիւրոյ ականցն զառատահոս աղբիւրս ամենատեսակ բարեաց և շնորհաց. և տարածեալ զամենառատ ձեռս իւր՝ էհեղ և բաշխեաց անչափապէս առ ամենեսեան։ Մինչ զի և զկենդանարար մարմին և զարիւն իւր ոչ խնայելով՝ ետ յուտել և յըմպել։ Զայնելով առ ամենեսեան թէ՝ եկայք կերայք 'ի հացէ իմմէ և արբէք զգինի իմ, զորս տամ անխընայօրէն՝ որքան բազմեալ եմ յաթոռս յայս ողորմութեան և ուրախութեան։

Արդ՝ ով տեղի հանգստեան և սիրելի աթոռ ողորմութեանն Աստուծոյ։ Այլ ես մի եմ 'ի հաւատացելոց և յերկրպագուացն քոց՝ և 'ի քեզ բազմեալ թագաւորին. որ եմ աղքատ, քաղցեալ, ծարաւի և կարօտ յամենայնի։ Վասն որոյ՝ աղաչեմ զքեզ՝ զի ինձ ողորմեսցիս. և յայդքան անպատմելի բարեացդ՝ (որով լիացան երկնաւորք և

երկրաւորք). մասն մի՝ և յիս ողորմելոյս կարկառեսցես, որ բաւական է 'ի լցուցումն ամենայնի պիտոյից հոգւոյ և մարմնոյ իմոյ։

Դու ես անօթ, տուի և բժշկարան այնմ բժշկապետին. որ իւրով աստուածահրաշ զօրութեամբն բժշկեաց և առողջացոյց զբոլոր բնութիւնս մեր 'ի մահաբեր հիւանդութեանց և 'ի զանազան ցաւոց, զորս ընկալեալ էաք 'ի թունից անմարմին օձին. և շնորհեաց զյաւիտենականն կենդանութիւն։

Այն ամենայն հոգեկեցոյցք և ամենազօրեղք դեղորայքն 'ի քեզ են ամփոփեալք և 'ի քեզ են դանձեցեալք։

Այ՝ և ես որ մի եմ 'ի ծառայից և 'ի բժշկեցելոցն 'ի քէն՝ և 'ի քեզ բազմեալ բժշկապետէն. վերստին վերաւորեալ եմ 'ի նոյն հնոյ թշնամւոյն, և ախտացեալ եմ 'ի պէսպէս ցաւս և 'ի հիւանդութիւնս 'ի զանազան թունից նոյնոյ չարին. և կարօտիմ քումդ շնորհաց։

Վասն որոյ՝ աղաչեմ զքեզ ով ամենաբաւական բժիշկ. զի զշէթ մի յայդքան ամենատեսակ բժշկարար շնորհացդ, յօդեսցես 'ի յիս. որ բաւական է ինձ 'ի բժշկութիւն հոգւոյ և մարմնոյ իմոյ, և տալ ինձ զյաւիտենականն կենդանութիւն։

Դու ես գաւազան յաղթութեան և զէն անպարտելի՝ ամենազօր փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Որ քեզ պատառեաց զծով մեղաց աշխարհիս. կործանեաց զփարաւօնացեալ թշնամին յանդուգն գժոխոյ. ազատեաց զպատկերն իւր 'ի չար ծառայութենէ նորին. և էհան 'ի վերինն երուսաղէմ։

Քեզ ջախջախեաց զգլուխ աներևոյթ վիշապին և անմարմին գողիպդայ, և ազատեաց զժողովուրդն իւր 'ի խրոխտանաց և 'ի բռնութենէ նորա։

Երդ՝ և ես, որ մի եմ 'ի ծառայից և 'ի փրկելոցն ամենազօր փրկչին իմոյ 'ի ձեռն քոյ, վերըստին գերեաց նոյն թշնամին իւրով ամենաչար հնարիւքն. արար ծառայ՝ իւրական չար գործոցն։ Եւ միշտ խրոխտալով 'ի վերայ իմ՝, կամի զիս յաւիտենական ազատութիւն ծառայեցուցանել և գժոխային առնել։

Վասն որոյ՝ աղաչեմ զքեզ, ով ամենազօր սքանչաչ։ Խորտակեա զբռնութիւն թշնամւոյն իմոյ. և ազատեա զիս 'ի ծառայութենէ նորին։ Եւ պահելով զիս ընդ հովանեաւ քով, հանցես զիս 'ի յերկինս ընդ ամենայն փրկեցելոցն՝ 'ի յաւիտենական ազատութիւնն և յանդրտում ուրախութիւն։

Ո՛վ ամենացանկալի և յամենեցունց երկրպագելի սուրբ Խաչ։ Մինչդամայն դու ես կնիք, նշան, և դրոշմ Աստուծոյն աստուծոց, թագաւորին թագաւորաց, արարչին և նախախնամողին ամենայն արարածոց։ Քանզի՝ քեզ կնքէ և նշանէ Աստուած զիւրսն՝ և բաժանէ յօտարաց։ Քեզ ճանաչէ զիւրսն՝ և ճանաչի 'ի նոցանէ։ Քեզ գրեաց զքիր ազատութեանն ադամայ և նորայնոյն։ Քեզ նկարագրեաց զնոր ուխտս և զօրէնս իւր 'ի սիրտս նորոյս խրատելի։ Քեզ արձանագրեաց քակիլ դժոխոցն և ազատիլ հոգւոցն։ Քեզ դատաւճռեաց ըզկործանումն սատանայի և բռնութեան նորա։ Քեզ հրամանագրեաց զնաղազութիւն երկնաւորաց և երկրաւորաց։ Քեզ դրոշմեալ ազատէ և պահպա-

նէ զիւրսն 'ի յանկարծամահ սատակմանէ, և յաւիտենական մահուանէ. հանէ յերկինս և գրէ 'ի գիրն կենաց: Այլ 'ի հանդերձեալն՝ զքեզ ունելով առաջի իւր նախնեաց՝ զայ 'ի դատաստան փառօք հօր՝ 'ի դատել զամենեսեան: Այլ քեզ կնքէ զամենահաստատ և զանսխալելի վճիռն զայն թէ՝ արդարքն երթիցեն 'ի կեանսն յաւիտենականս և մեղաւորքն 'ի տանջանսն յաւիտենականս:

Արդ՝ ով ամենաբարելի սեղան, և աթոռ ողորմութեան: Ո՛վ ամենատեսակ շնորհաց օթարան, և ամենայն ցաւոց բժշկարան: Ո՛վ ահարկու զէն, և ամենազօր գաւազան: Ո՛վ ամենապատշաճելի նշան, և անլուծանելի կնիք ամենաթագաւորին Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի սուրբ Խաչ:

Այս ամենայն՝ և ևս առաւել քան զայսոսիկ՝ բիւրապատիկ պարգևք և բարութիւնք. բժշկութիւնք և կենագործութիւնք. ազատութիւնք և փրկագործութիւնք. աստուածական տնօրէնութիւնք և ներգործութիւնք. քեզ՝ և 'ի ձեռն քոյ բաշխեցան և բաշխին. գործեցան՝ և գործին. կատարեցան և կատարին: Որոց գործիքն՝ միջնորդն և շտեմարանն՝ դու ես ով ամենասիրելի Խաչ Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Արդ՝ և ես ամենաթշուառս և ամենողորմելիս. որ մի եմ 'ի քեզ փրկեցելոցն և բարերարեցելոցն. քեզ կնքեցելոց և երկրպագուաց ծառայիցն քոց:

Քանզի՝ քեզ վերածնեալ կենդանացայ և նորոգեցայ 'ի հնութենէ մեղաց և 'ի մեռելութէ մահաբեր ծառոյն:

Քեզ կնքեցայ և նշանեցայ՝ լենին Քրիստոսի և ժառանգորդ յաւիտենական կենաց։

Քեզ դրոշմեցեալ բաժանեցայ յօտարաց՝ և գրեցայ ոչխար և հաւատացեալ Քրիստոսի ճշմարիտ հովուին։

Քեզ կնքեմ և նշանեմ զդէմս իմ և ամրաւակեմ միշտ զամենայն զգայարանս հոգւոյ և մարմնոյ իմոյ. և Քեզ պարծիմ հանապազ, և զքեզ ունիմ ինձ յոյս և օգնական յամենայնումի ժամու։

Այս այժմ՝ անկանիմ առաջի ամենազօրի սրբոյ նշանիդ. և խոնարհեալ երկիրպագանեմ. և համբուրեմ շրթամբք հոգւոյս զհող պատուանդանիդ. և խնդրեմ աղաչանօք. զի զքո սուրբ և զահեղ անունդ և զսոսկալի կնիքդ անջնջելի և անմեռնելի պահեսցես 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ ծառայիս քոյ. և ընդ հովանեաւ քով պահպանեսցես զիս 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր վտանգից։

Արկրպագեմ ընդ քեզ և սրբոց և հրաշագործ գործակցացն քոց. աստուածակիր և կողմունս սրբոյ Դեղարդեանն. սոսկալեաց սրբոց Ռևեռացն. աստուածաշունչ սրբոյ փշեայ Պսակին. և այլոց պատուական արեամբ ներկեալ Նշանաց և Խորհրդեացդ չարչարանացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Որք ամենեքեանքդ՝ էք շտեմարանք շնորհաց. աղբիւրք բարեաց. գործիք փրկութ. նշանք ամենազօրք. և անսակարանելի սուրբ ընդդէմ թշնամւոյն։

Որոց ամենեցունցդ խոնարհեալ երկիրպագանեմ՝ մեծաւ երկիւղիս և պատկառանօք. և աղաչեմ զձեզ. ով շնորհատուք և փրկագործք սէ 'Նշանք։

Լերուք ծառայիս Ձերոյ միշտ օգնականք պահապանք՝ հովանիք և վերակացուք. ի տուէ և ի գիշերի. ի ննջել և ի յառնել. ի նստիլ և ի գնալ. ի գործել և ի հանգչիլ. և յամենայնումի ժամուն։

Որպէս զի՝ ընդ Ձերով հովանաւորութիւն ամրապակեալ և պարսպեալ՝ կեցից պահպանեալ և փրկեցեալ յամենից մեղաց. ի փորձութեանց դիւաց. ի մարդոց անիրաւաց. ի չարախօսաց և ի զրախօս լեզուաց. ի մարդադիմ գազանաց. ի թունաւոր և վնասատու կենդանեաց. ի յերևելի և յաներևոյթ թշնամեաց. ի հոգևոր և ի մարմնաւոր վտանգից. և յամենից պէսպէս յորոգայթից և ի չարահնար պատահմանց։

Այլ ի յիշել իմ զսոսկալի անունս Ձեր, և ի կնքելն զդէմս իմ, հալածեսցին և չքասցին. կորիցեն և անյայտք եղիցին ամենայն հնարք՝ երեւոյթք. ազդմունք. ծողակք և որոգայթք չարին։

Այլ որչափ՝ և յորժամ յարիցեն ի վերայ իմ ի պատրել և ի նենգել զիս ըստ հոգւոյս և ըստ մարմնոյս, տեսանիցեն պարսպեալ և կնքեալ ամենասոսկալի անուամբ Ձերով՝ դարձցին յետս ամօթալից և գլխակորք։

Այլ որքան եմ ի կեանս յայս, կեցից պահպանեալ և ապրեցեալ յամենայն որոգայթից թշնամեաց՝ և յամենից մեղսահիթ ընթացից՝ սուրբ և հրաշալի անուամբ Ձերով։

Այլ յետ ասասեացս ձեօք կնքեցեալ՝ ներկացցայց առաջի Քրիստոսի Աստուծոյն իմոյ, և դասեցցայց ընդ աջակողմեանսն, և լուայց զօրհնաբանե-

լի ձայնն զայն թէ՝ եկայք օրհնեալք հօր իմոյ. և ժառանգեցէք զյաւիտենական կեանն։ Յայնժամ և ես փառաւորեցից զՔրիստոս Աստուածն իմ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյն. և զնեզ զսուրբ և զփրկագործ նշանսդ՝ զոհութեամբ բարեբանեցից յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ցիշատակարան Գրիգորի Աղօթից։

Անլռելի զոհութի Արեքսարեան Տերութեան միասնական սէր Արարողութեանն Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որոյ աներևոյթ աջոյն օժանդակութեամբ յաջողեցաւ տպագրութի հոգեշահ աղօթից 'ի վայել Աստուածասէր աղօթաւորաց։

Հայցեմ սիրողաբար յամ քրիստոսանուն վայելողացդ զհոգեկեցոյց Արդասիս Աղօթից յիշատակել 'ի խնկելի աղօթս ձեր զբազմերախտ Հանգուցեալ Հայրն մեր զտէր Յարութի Քահանայն վարդանեան Սուքիասեանց, և զմայրն մեր զՎարթխաթունն և զորդիս սոցա զՍահակ վարդապետն և զտիրացու Եփրեմն վաղամոիկ և զվաղաթառամ թոռունս սոցա և զայլ ամ զհին և զնոր ննջեցեալսն. և աղաչել զանոխակալ զթութի Աշխարհափրկիչ կենարարին խառնել զամենեսեան 'ի լուսազարդ երամն սիրելեաց իւրոց, և յաւուր համաշխարհական ահեղ հարցափորձի կամարարացն իւրոց առնել դասակից և պակակից։

Վ. Ա Խ Ա Ն։



Գ. Ա. Ս. Ա.

Գրչեան և Հ. Ասատուրեան։

ԳԻԳՈՅԸ ԵՆԹԱՐԻՎԵԼ Է ախատաջանման
8/Ե-42 թ.